

ՊԱՅՐԵՅՆ ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՆ ՈՒ ԻՐԱՆԵԱՆ ՉԷՆՔԵՐ ԵՐ ՈՒՄԲԵՐ ԳՐԱԲԵԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ

Պահրեյնի ներքին գործոց նախարարությունը երեկ «Թուխթը»-ի վրայ հաղորդագրություն մը հրապարակելով յայտարարեց, որ ձերբակալած է ահաբեկչական տարրեր, որոնք ձեռնարկած էին քաղաքացիական անվտանգությունն ու խաղաղությունը թիրախատրող ահաբեկչական գործողություններու ծրագրման ու պատրաստութեան:

Նախարարությունը աւելցուց, որ «Իրանի մէջ գտնուող ահաբեկչական խմբաւորումներու» առնչակից այդ տարրերուն մօտ յայտնաբերած ու գրաւած է իրանեան զէնքեր եւ ռումբեր:

ՆԱԽԱԳԱՅ ՍԱՐԳՍԵԱՆԸ՝ ՆԱԽԱԳԱՅ ԱՈՒՆԻՆ.

«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՆԵՐՈՒՆ ՄԱՏԱՐԱԾ ԵՆ ԻՐԱՐ, ԱՅՍՕՐ ԱԼ ԿԸ ՊԱՅՔԱՐԻՆ ՅԱՆՈՒՆ ԱՐԿԱՐՈՒԹԵԱՆ»

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմեն Սարգսեանը շնորհաւորական ուղերձ յղած է Լիբանանի Հանրապետութեան նախագահ Միշել Աունին՝ Լիբանանի Անկախութեան տօնին առիթով:

Շնորհաւորական ուղերձին մէջ նշուած է. «Հայ-լիբանանեան յարաբերութիւնները, որոնց հիմքում մեր ժողովուրդների աւանդական բարեկամութիւնն ու անկեղծ համակրանքն են, մշտապէս

Շար.ը՝ էջ 7

ՅՈՒՅԱՐԱՐՆԵՐԸ ԻԾԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՊԱՆԱՋԵՑԻՆ ԲԱՅԱՅԱՅՏԵԼ ՅԱՌԱՋԻԿԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԵԼԻՔ ՓԱՏՏԱԾՈՒԹԻՆ ԲՈՎՆԱՂԱՎԱՌՈՒԹԻՒՆԸ

Երեկ՝ երկուշաբթի, 22 նոյեմբեր 2021-ին Հայաստանի մայրաքաղաքի տարբեր հաստատեաններուն մէջ տեղի ունեցան բողոքի զանգուածային ցոյցեր, որոնց մասնակցող քաղաքացիները երթով շարժեցան դէպի Ազգային ժողով եւ ընդդիմադիր պատգամաւորներուն յանձնեցին իրենց դիմումը, որուն մէջ ձեւակերպած են խորհրդարանէն դուրս ձեւաւորուած

Շար.ը՝ էջ 7

ԱԶՐՊԵՅՃԱՆՅԻՆԵՐԸ ԿՐԱԿ ԲԱՅԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՆՈՐԱԲԱԿ ԳԻՒԴԻՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ. ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ՝ ՆԱՀԱՏԱԿՈՒՄԸ

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը հաղորդեց, որ երեկ՝ երկուշաբթի, 22 նոյեմբերին, երեկոյեան ժամը 6:10-ի շուրջ, Ազրպէյճանի զինւած ուժերու ստորաբաժանումները տարբեր տրա-

Շար.ը՝ էջ 7

ԻԾԽԱՆ ՄԱՂԱԹԵԼԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ



Երեկ՝ 22 նոյեմբեր 2021-ին, ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթէեան ընդունած է ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունին: Իշխան

Շար.ը՝ էջ 7

ԻԾԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՍՈՒՐԻՈՅ ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ

ՀԱԺ ԻՊՐԱՅԻՄ. «ԹՈՒՐԵՒՈՅ ԲԱՅԼԵՐԸ ՈՂՂՈՒՄԸ ԵՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԴԵՍ»



Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ, ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Հայաստան-Սուրիա բարեկամական խումբի դէկավար Իշխան Սաղաթէեան 22 նոյեմբեր 2021-ին հանդիպում ունեցաւ Հայաստանի մէջ Սուրիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Մոհամետ Հաժ Իպրահիմի հետ:

Շար.ը՝ էջ 7

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 78-ԱՄԵԱԿ

ՆԱԽԱԳԱՀ ԱՈՒՆ. «ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՋԱՆԻՍ ՎԵՐՋԻՆ ՏԱՐՈՒՄԸ ԸՆԹԱՅՔԻՆ ՊԻՏԻ ՀՈՒՆԱՌՈՐԵՄ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ՝ ՀԱՄՆԵԼՈՎ ՄԻՆՉԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՄԱՆ»



Մինչ երեսփոխանական ընտրութիւններուն իրենց մասնակցութիւնը բերելու նպատակով արձանագրուող արտերկրի լիբանանցիներուն թիւը հասաւ 244.422-ի, Լիբանան խորհրդ-

դանշական կերպով նշեց իր Անկախութեան տօնը:

Լիբանանի անկախութեան 78-ամեակին առիթով, երեկ բանակի հրամանատարութեան կազմակերպութեամբ

Շար.ը՝ էջ 2

«ՊԵՏԸ Է ԱՄՐԱՊՆԴԵԸ «ՆԵՐԵԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐ ԶԿԱՆ, ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԲՈԼՈՐԻՆ Է» ՏԱՐԱԶԸ»
ՇԵՇՏԵՑ 3. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Լիբանանի անկախութեան 78-ամեակին առիթով, Հայկական երեսփոխանական պլոքի եւ ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի ընկերային ցանցերուն վրայ տեղադրեց հետեւեալ գրառումը.

«Անկախութեան տօնը այս տարի կը զուգահեռի քաղաքական, ապրուստի եւ գոյութեան տագնապներուն, որոնք Լիբանանի պատմութեան մէջ ամենէն վտանգաւորը կը նկատուի:

Այս առիթով մեր գրաւը կը դնենք ազգային համագործակցութեան ոգիին, ինչպէս նաեւ գոյատեւելու եւ համբերելու կարողութեան վրայ, որպէսզի կարենանք շրջանցել ներքին եւ արտաքին բախումներն ու տագնապները, եւ ամրապնդել Լիբանանի պատգամի երկրի ըլլալու իրականութիւնը:

Բոլորս կը գտնուինք երկրին անկախութիւնը պահպանելու եւ վերականգնելու ընկոյթան դիմաց: Հետեւաբար պետք է ամրապնդենք «Ներքին թշնամիներ չկան, եւ հայրենիքը բոլորին է» տարազը:

Անկախութեան տօնին առիթով ամենայն բարիք՝ Լիբանանին ու լիբանանցիներուն»:

«ՈՐՈՇԱԾ ԵՆՔ ՄՆԱԼ ՈՒ ՊԱՅՔԱՐԻԼ». ԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՀԱՆԴԻՊԵՑԱՒ ԼԻԲԱՆԱՆԱԿԱՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐՈՒՆ ՀԵՏ



ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի Հայրենադարձներու խորհրդատուութեան գրասենեակի նախաձեռնութեամբ 20 նոյեմբերին հանդիպում տեղի ունեցաւ Հայաստան գտնուող ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունիի եւ հայրենադարձ

լիբանանահայերու միջեւ:

Հանդիպման մասնակցեցան ՀՀԴ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթէեանն ու ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի անդամ Աւետիս Կիտանեանը:

Շար.ը՝ էջ 8

ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ ՈՒՒԼՄԸՆԻ ԻՐԱՒԱՐԱՐ ՎՃԻՈՒ ՏԱՐԵԿԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ՆԱՄԱԿ ՄԸ ՅՂԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՄԵԱՅԵԱԼ ՆԱՀԱԳՆԵՐՈՒ ԴԵՍՊԱՆԻՆ

ՀՀԴ Լիբանանի Հայ դատի մարմինը 22 նոյեմբերին Միացեալ Նահանգներու Նախագահ Վուտօ Ուիլսոնի իրաւարար վճիռի տարեդարձին առիթով Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորըթի Շիային յղեց նամակ մը, որուն մէջ 22 նոյեմբեր 1920-ին հրապարակուած վճիռին պատմական հանգամանքները եւ Սեւ-



րի դաշնագիրի ճակատագիրը նշելէ ետք յայտնեց. «Թեւ յաջողող դէպքերը արգելք հանդիսացան իրաւարար վճիռի գործադրութեան, սակայն հոլովոյթը նախադէպ մըն է եւ ինքնին փաստ մը, թէ լուսաւորեալ միջազգային դիւանագիտութիւն մը ինչպէ՛ս կրնայ ժողովուրդի խաղաղ կեանքի իրաւունքը

Շար.ը՝ էջ 7

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԶՔԱՂԱՔԱԿԱՆԱՅՆԵԼ ԻՐԱՒԱՐԱՐ ՎՃԻՈՒ
(Ուիլսոնի իրաւարար վճիռի 101-ամեակին առիթով)

Ուիլսոնի իրաւարար վճիռի 101-ամեակն է: Իրաւարար վճիռի ստորագրման հերթական նշումը ծանր պայմաններու մէջ է, որ կ'արձանագրուի: Հայաստանի տարածքային ամբողջականութիւնը միջազգայնօրէն ամրագրող այս փաստաթուղթին հետ կապուած ուղերձները քըննարկելու պահուն կը գիտակցինք, որ ո՛չ միայն մեր տարածքներու վերատիրացման փուլային ընթացքէն շեղած ենք, այլ մեր վերահսկողութեան տակ եղող տարածքները զիջելու ընթացքին մէջ ենք: Եւ դժբախտաբար խօսքը չի վերաբերիր միայն Արցախին:

Ուիլսոնի ունեցած դերին մասին միատեսակ արժեւորումներ չկան մեր պատմագիտական եւ քաղաքական շրջանակներուն մէջ: Վճիռի իրաւաւորեցական դրոշմը ձգձգումները կը վերագրուին Նոյնիքն իրաւարար նախագահի ներկայացուցած կողմին: Աւելի՛ն. կ'ընդգծուի Ա. հանրապետութեան օրերուն ամերիկեան օժանդակութիւններուն զուտ մարդասիրական բնոյթը: Այսինքն՝ ոչ ռազմականը:

Այս օրերու իրադարձութիւններուն աշխարհաքաղաքական պատասխանատուներուն հետ կապուած քննարկումները կը ծաւալին: Այդ քըննարկումները կ'երկարին մինչեւ Սեւր, մինչեւ Ուիլսոն եւ մինչեւ Միացեալ Նահանգներ: Նոյն հետեւողութեամբ, այսօրուան պայմանաւորաձեւութիւնները, ռուսական գործծիկի ուղղակի ներգրաւումը, սահմանազատման եւ սահմանագծման գործընթացներու ուղղութեամբ կատարուող ճշդումները տեղի կու տան արեւելումներու որդեգրման, դաշնակիցներէ ձերբազատման եւ նոր դաշնակիցներ որոնելու քննարկումներուն:

Հիմնովին սխալ է սակայն Սեւրն ու այս պարագային իրաւարար վճիռը այս արեւելումներու ճշդումի քննարկումին համար գերադաշնակացները: Իրաւարար վճիռը մեր միացեալ Հայաստանի առաջարկանքի իրաւական հիմքն է. միջազգայնօրէն ընդունուած փաստաթուղթը, որ կը սահմանազատէ ու կը սահմանագծէ Հայաստանը Թուրքիոյ յարաբերակցութեամբ: Միջազգայնօրէն նաեւ իրաւաչափ է այս հոլովոյթը, մանաւանդ որ Ազգերու լիկան յատուկ յանձնախումբ նշանակած էր իրականացնելու համար Ուիլսոնի սահմանագծումը: Այստեղ ներքաղաքական պարանաձգութիւնները առաջնային չեն. համազգային գաղափարախօսութեան իրաւական յենասիւնի մասին է խօսքը:

Հետեւաբար Ուիլսոնի աքթը պետք չէ ծառայեցնել դաշնակիցներու արմատական շրջադարձումը հիմնաւորելու համար: Ոչ ալ նսեմացնել անշուշտ՝ արձանագրելու համար, որ Սեւրն ու Ուիլսոնը (իմա՝ Արեւմուտքը կամ Միացեալ Նահանգները) Թուրքիոյ եւ Ռուսիոյ յանձնած մեր երկիրը եւ այդպիսով պատճառ դարձած անկախութեան խորտակման: Պարզ. չնսեմացնել կամ չհարուածել վճիռը՝ քաղաքական արեւելումի կամ նոյնիսկ իշխանական պայքարի համար:

Դժբախտաբար մոռացութեան տրուած է Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի համահայկական հռչակագիրին մէջ տեղ գտած հետեւեալ արձանագրութիւնը.

«Արժեւորելով 1915 թուականին միջազգային հանրութեան կողմից Անդանդի պետութիւնների մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դէմ իրականացուած ծանրագոյն յանցագործութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ որպէս «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ իրականացուած յանցագործութիւն» որակումը եւ օսմանեան իշխանութիւնների պատասխանատուութեան կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպէս նաեւ 1920 թուականի օգոստոսի 10-ի Սեւրի հաշտութեան պայմանագրի եւ 1920 թուականի նոյեմբերի 22-ի՝ Միացեալ Նահանգների նախագահ Վուտօ Ուիլսոնի Իրաւարար վճիռի դերը եւ նշանակութիւնը Հայոց ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում»:

Ահա այն է համազգային մօտեցումը եւ ընկալումը իրաւարար վճիռին: Ցեղասպանութեան հետեւանքներու վերացման իրաւական հիմքը կը վերաբերի անշուշտ նաեւ մեր տարածքային պահանջներուն: Իրաւարար վճիռի գաղափարախօսական հենքը շատ աւելի առաջնային է: Անտեղի է համազգային առաջադրանքներու միջազգային յենասիւններու շահարկումը:

ՄՈՍԿՈՎԱՅԻ ՄԵՋ

«ԵԹԷ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ ԶՐԱԽԻՐՈՒՄ, ՈՒՂԱԿԻ ԶՈՆ ՊԻՏԻ ՄԵԿՆԻՄ, ԻՍԿ ԳԸԶՊԱԼԼԱՅԻ ԶԻՆԵԱԼ ԹԵՐԸ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ Է»

ՇԵՇՏԵՑ ՊՈՒ ԶԱՊԻՊ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ապտալլա Պու Յապիպ երեկ այցելեց Մոսկուա, ուր հանդիպում մը ունեցաւ իր ռուս պաշտօնակից Սերկեյ Լաւրովի հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան լիբանանեան, շրջանային եւ միջազգային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ լիբանանեան-ռուսական յարաբերութիւններն ու երկկողմանի գործակցութիւնը ամրապնդելու հետեակարները:

Քննարկուեցան նաեւ Լիբանանի գործադրելիք կարեւորագոյն բարեկարգումները:

Շուրջ երեքուկէս ժամ տեւած հանդիպումը շարունակուեցաւ նաեւ ի պատիւ Պու Յապիպի սարքուած ճաշկերպոյի մը շուրջ:

Հանդիպումէն ետք Պու Յապիպ շնորհակալութիւն յայտնեց Լաւրովին՝ Մոսկուայի կողմէ Լիբանանին տրամադրուած Պէյրութի նաւահանգիստի պայթումին վերաբերող արբանեակային լուսանկարներուն համար, որոնք առնուած էին 4 օգոստոս 2020-ին, պայթումէն առաջ եւ վերջ:

Պու Յապիպ հաստատեց, որ այդ լուսանկարները պիտի գետնողիւն լիբանանեան դատական իշխանութիւններուն տրամադրութեան տակ՝ յոյսով, որ անոնք օժանդակեն Լիբանանը հարուածած ողբերգական այդ աղետին ճշմարտութեան բացայայտումին:

Պու Յապիպ նկատել տուաւ նաեւ, որ Լաւրովի հետ քննարկած է լիբանանեան քաղաքական եւ տընտեսական իրադարձութիւնները, ինչպէս նաեւ այն քայլերը, որոնք արդէն իսկ սկսած են առնուիլ Միջազգային դրամական ֆոնտին եւ լիբանանեան պետութեան միջեւ:

«Քննարկեցինք նաեւ կատարուելիք բարեկարգումները, յատկապէս՝ ելեկտրականութեան եւ դրամատնային մարզերը, ինչպէս նաեւ պետական մարզը վերականգնելու իմաստով», ըսաւ ան՝ աւելցնելով:

ՆԱՏԵՐ ԳԱՍՊԱՐ՝ ԻՐԱՒԱՔԱՆՆԵՐՈՒ ՄԵՆՏԻՔԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ

Անցեալ կիրակի օր տեղի ունեցան Պէյրութի Իրաւաբաններու սեստիքայի ընտրութիւնները, որոնց ընթացքին յաջողութիւն արձանագրեցին 9 իրաւաբաններ՝ Իմատ Մարթինոս, Նատեր Գասպար, Էլիաս Պազըրլի, Ապտո Լահուտ, Իսքանտար Նաժժար, Ֆատի Մարի, Մարուան ժապըր, Նեժիպ Մասաւա եւ Մայա Չաարինի:

Իրաւաբաններու Պէյրութի սեստիքայի նոր նախագահն է Նատեր Գասպար:

Այս առիթով Գասպար նշեց, որ իրաւաբանին անձեռնմխելիութիւնը, ջանքերը, ապրուստը, գումարները եւ դրամատուներուն մէջ պահ դրուած գումար ունեցող բոլոր լիբանանցիներուն իրաւունքը կարմիր գիծեր են:

«Քաղաքացիներուն արժանապատուութիւնը կարմիր գիծ է: Ազգային բոլոր հարցերը պիտի չանտեսենք, այլ՝ ամենայն լոյրութեամբ, թափանցիկութեամբ, քաջութեամբ եւ իմաստուն կեցուածքով պիտի հետապնդենք: Ժամանակն է գործելու եւ գործակելու», ըսաւ ան:

Գասպար հաստատեց, որ իրենք քաղաքականութեան հետ գործ չունին՝ պահանջելով, որ քաղաքականութիւնը իր կարգին միջամուխ չըլլայ իրենց աշխատանքներուն:

Իրաւաբաններու սեստիքայի նախկին նախագահ



լով, որ սերտած են երկկողմանի համաձայնագիրները աշխուժացնելու միջոցներն ու կարելիութիւնները:

«Լաւրով ընդգծեց, որ իրենք կը քաջալերեն Լիբանանի մէջ գործող ռուսական ընկերութիւնները՝ յաւելեալ աշխուժ քայլեր որդեգրելու լիբանանեան պետական մարզը վերականգնելու եւ ուժանիւթի մարզին մէջ աշխատելու առումով», ըսաւ ան:

Պու Յապիպ նկատել տուաւ, որ իր ռուս պաշտօնակիցին հետ քննարկած է նաեւ Սուրիոյ իրադարձութիւններն ու Սուրիոյ ապագային վերաբերող հարցեր՝ ողջունելով ռուսական նախաձեռնութեան կարելիութիւնը՝ Լիբանանի մէջ գտնուող սուրիացի տեղահանուածներուն ապահով տունդարձ երաշխատելու առումով:

Լրագրողներու հարցումներուն պատասխանելով՝ Պու Յապիպ նշեց, որ եթէ Սեւտական Արաբիա իրաւորուի, ապա Ռուսիայէն ուղղակի հոն կը մեկնի:

Այլ հարցումի մը անդրադառնալով Պու Յապիպ ըսաւ, որ Յըզպալլայի զինեալ թեւը շրջանային խընդիր է եւ ոչ թէ զուտ լիբանանեան:

Պու Յապիպ նաեւ յայտնեց, որ Լաւրովին յանձնած է Լիբանան այցելութեան պաշտօնական հրաւեր մը:



Մըլիմէ Խալաֆ շնորհաւորեց Նատեր Գասպարը՝ հաստատելով, որ ընտրութիւնները նոր փուլ մըն են՝ վերահաստատելու համար վստահութիւնը եւ ընդգծելու համար Իրաւաբաններու սեստիքային դիմադրողականութիւնը, որ հիմնուած է արժեքներու, մշակոյթի եւ հայրենասիրութեան ամուր ժայռերու վրայ:

Խալաֆ յաջողութիւն մաղթեց Գասպարին՝ շեշտելով, որ ան վստահելի անձնաւորութիւն է բոլորին համար, եւ արժանի է այս պաշտօնին:

Խալաֆ խոստացաւ ամէն իմաստով զօրակցիլ սեստիքայի նորընտիր նախագահին:

ՖԱՅԵԶ ՂՈՍԸՆ ՈՉ ԵՄ Է

Մարատա հոսանքի երեսփոխան Ֆայեզ Ղոսըն երեկ մահացաւ 71 տարեկան հասակին:

Ղոսըն ծնած է Քոսպա, 28 յունիս 1950-ին: Առաջին անգամ երեսփոխան ընտրուած է 1992-ին՝ 1992-1996 խորհրդարանական նստաշրջանին համար, եւ վերընտրուած է 1996-ին՝ 1996-2000 խորհրդարանական նըստաշրջանին համար:

2006-էն ի վեր ան Մարատա հոսանքի փոխնախագահի պաշտօնը կը վարէ:

Ղոսընի մահը գուժեց Մարատա հոսանքի դեկավար Սլէյման Ֆրէմժիէն, որ հաստատեց, թէ ամբողջ կեանքին ընթացքին Ղոսըն իրեն համար եղած է եղ-



բայր, անկեղծ ու հաւատարիմ ընկեր: Վարչապետ Նեժիպ Միքաթի իր կարգին գումեց Ղոսընի մահը շեշտելով, որ Ղոսըն իր ետին մեծ սեր եւ ազգային ներկայութիւն ձգած է ո'չ միայն Քուրայի մէջ, գոր պաշտելու չափ սիրած է, այլ՝ ամբողջ հիւսիսային Լիբանանի մէջ:

Խորհրդարանը երեկ երեկոյեան գումեց Ղոսընի մահը՝ հաստատելով, որ Ղոսընի կորուստով խորհրդարանը կը կորսնցնէ Լիբանանը բռուն կերպով պաշտպանող իր պողպատեայ անձնաւորութիւնը:

Նաւորութիւններէն անդամ մը, որ ուներ իր սկզբունքները, դերակատարութիւնը եւ ինքնութիւնը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹԵԱՆ Նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Քորոնա» ժահիրով 556 վարակուածներ եւ մահացած 10 ուրիշներ:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ սեւ շուկային մէջ ամերիկեան տոյարին սակը անցաւ 23.500 լ. ոսկիի սահմանը:

●ՄԱՐՈՆԻ համայնքի Պշարա Ռայի պատրիարքը ընդգծեց, որ անկախութիւնը անկարելի է, որ գոյակցի այլ երկրի մը հաւատարիմ մնալու յանձնառութեան հետ:

●ՅՅՈՐ Լիբանան համախմբումի երեսփոխան Ասաատ Տըղղամ հաստատեց, որ երկիր մը չի կրնար գերիշխան ըլլալ, եթէ ժողովուրդը անօթի է: «Ազատութիւնն ու անկախութիւնը կախեալ են այն իրականութենէն, որ քաղաքացիին արժանապատուութեամբ ապրի», շեշտեց ան:

●ՆԱԿԿԻԼ վարչապետ Սաատ Յարիրի յայտնեց, որ Լիբանան կանգնած է դժոխքի սեմին: Ան ցաւ յայտնեց, որ պետութիւնը անկարող է կառավարութեան նիստ մը գումարել:

●ՆԱԿԿԻԼ վարչապետ Ֆուատ Սինիրա հաստատեց, որ լիբանանեան պետութիւնը առեւանգըւած է եւ կը գտնուի Յըզպալլայի իշխանութեան տակ:

●ՅՅՈՐ Լիբանան համախմբումի երեսփոխան Իպրահիմ Զանաան մաղթեց, որ երեսփոխանական ընտրութիւնները ըլլան հանրաքուժ մը՝ պատասխանելու համար այն հարցումին, թէ ինչպիսի՞ Լիբանան կը փափաքիք ունենալ:

●ՄԻԿՏԵԱԼ Նահանգներու արտաքին գործոց նախարար Էնթընի Պիլնքըն յայտնեց, որ Ուաշինկթըն պիտի շարունակէ նեցուկ կանգնիլ լիբանանցիներուն:

●ԼԻԲԱՆԱՆԻ մէջ Եւրոպական Միութեան դեսպան Ռալֆ Թրաֆ անհրաժեշտ նկատեց Լիբանանի մէջ ժողովրդավարական անանդութիւններուն տեր կանգնիլը: Ան աւելցուց, որ երեսփոխանական ընտրութիւններուն թուականը անփոփոխ պահելը ժողովրդավարութեան պահպանումին եւութիւնն է:

●ԼԻԲԱՆԱՆԻ մէջ Ֆրանսայի դեսպան Անն Կրիօ յայտնեց, որ Լիբանանի կացութիւնը ողբերգական է՝ աւելցնելով, որ լիբանանեան իշխանութիւններն ու քաղաքական դասակարգը պէտք է ստանձնեն իրենց պատասխանատուութիւնները:

●ԻՍՐԱԵԼԵԱՆ բանակի բանբեր Ալիխայ Ատրա-հի յայտնեց, որ Յըզպալլա Լիբանան չի պաշտպաներ, այլ՝ անկաւ անարեւելական կազմակերպութիւն մըն է, որ իրանեան օրակագրերը կը գործադրէ:

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ. «ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆԱՏԱՇՐՋԱՆԻՍ...

Շարունակուած Ա. Էջեն

տեղի ունեցաւ զինուորական խորհրդ-դանշական տողանցք մը, որուն ներկայ գտնուեցան հանրապետութեան նախագահ զօր. Միշել Աուն, խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի, վարչապետ Նեժիպ Միքաթի:

Պաշտպանութեան նախարարութեան կեդրոնատեղիին մէջ տեղի ունեցած անկախութեան պաշտօնական հանդիսութեան ներկայ գտնուեցան նաեւ պաշտպանութեան նախարար Մորիս Սլիմ, ներքին գործոց նախարար Պասսամ Մաուլաուի, ապահովական կառոյցներու պետերը, ՖԻՆԻԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերու հրամանատար զօր. Սթեֆանօ Տել Զոլ, ինչպէս նաեւ պետական հաստատութիւններու ընդհանուր տնօրէններ եւ սպաներ:

Նախագահ Աունի գալուստը ողջունուեցաւ թընդանօթի 21 հարուածներով: Հանրապետութեան նախագահը «Անժանօթ զինուոր»-ի յուշարձանին գետեղեց ծաղկեպսակ մը:

Ապա տեղի ունեցաւ զինուորական տողանցք, ինչպէս նաեւ լիբանանեան օդուժին կողմէ երկինքին մէջ կատարուեցաւ լիբանանեան դրօշի ցուցադրութիւն:

Ապա իշխանութեան երեք պետերը ուղղուեցան նախագահական պալատ:

Կարգ մը աղբիւրներ յայտնեցին, որ երեք պետերու հանդիպումին ընթացքին համաձայնութիւն գոյացած է Պէյրութի նաւահանգիստի պայթումի թըղթածորաի հետաքննութեան պատասխանատու դատաւոր Թարեք Պիթարի հարցին լուծման մը շուրջ՝ նկատել տալով, որ եթէ այդ հարցը դատական իշխանութիւններուն կողմէ կարելի չըլլայ լուծել, ապա հաւանաբար խորհրդարանին միջոցով լուծուի:



Նոյն աղբիւրները շեշտեցին, որ տեղեկատուութեան նախարար Ժորժ Զըրտահիի տազնապը կառավարութեան տազնապ չէ, այլ՝ անձնական է, եւ անոր հրաժարականին դիմաց դռները բաց են:

Հանդիպումէն ետք Պըրրի մեկնեցաւ՝ մաղթելով Աստուծմէ բարին: Իսկ վարչապետ Միքաթի յայտնեց, որ Լիբանանի անկախութիւնը չէր յայտարարուեր, եթէ լիբանանցիները Ռաշա-յայի մէջ իրարու հետ չհանդիպէին:

«Երկխօսութիւնն ու փոխըմբռնումը հիմնական են, իսկ այսօրուան հանդիպումը լաւ հանդիպում էր, եւ վստահ եմ, որ ան պիտի առաջնորդէ լաւ ելքերու», ըսաւ Միքաթի:

Կեսօրէ ետք նախագահ Աուն ընդունեց ապահովական կառոյցներու պետերը, որոնք ներկայութեան հաստատեց, որ նախագահական իր նստաշրջանի վերջին տարուան ընթացքին պիտի՝ հունակներ բարեկարգումները՝ հասնելով միջէն տնտեսական տագնապի լուծման:

Իր կարգին, բանակի հրամանատար զօր. Ժոզէֆ Աուն շեշտեց, որ իրենց յոյսը նախագահին իմաստուն մօտեցումներուն մէջ է՝ փշոտ թղթածորաներուն նկատմամբ, որպէսզի նուազագոյն վնասներով կարելի ըլլայ լուծել երկրին տագնապները:

Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-զօրավար Իմատ Օսման կոչ ուղղեց փըրկելու զինուորական եւ ապահովական հաստատութիւնները, երբ տակաւին ժամանակը կ'արտօսէ անոնց փրկութիւնը:

Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն հազարապետ-զօրավար Ապպաս Իպրահիմ ընդգծեց, որ նախագահ Աունի իշխանութեան օրերուն իրականացուած գործողութիւնները իրենց ներդրումը ունեցած են Լիբա-

նանը պաշտպանելու առումով:

Պետական անվտանգութեան ուժերու ընդհանուր տնօրէն հազարապետ-զօրավար Թոնի Սալիպա շեշտեց, որ իրենք կառչած կը մնան Լիբանանի թըղթածութիւններուն դէմ պայքարին՝ պաշտպանելով օրէնքը, իրաւունքն ու հայրենիքը, ինչքան ալ դժուար ըլլան տիրող պայմանները:



Կիրակի երեկոյեան ժամը 8:00-ին նախագահ Աուն պատկերասփռուած ճառի մը ընդմէջէն հաստատեց. «Սեր իրաւունքն ու պարտաւորութիւնն է կառչած մնալ անկախութեան եւ ամրապնդել զայն: Իսկ տազնապներուն քաղաքական շահարկումէն միայն յաւելեալ տազնապ եւ երկվեղկում կրնայ բխիլ»:

Ան շեշտեց, որ կան դրական ցուցանիշներ, որոնք կրնան յանգեցնել Լիբանանի շահերուն երաշխաւորման, ինչպէս նաեւ իր ջուրերուն եւ բնական հարստութեան իրաւունքին ու գերիշխանութեան ամրապնդումին:

Նախագահ Աուն ընդգծեց, որ Կեդրոնական դրամատան հաշիւները իրաւական հաշուետուութեան ենթարկելու քայլը բնական է եւ անկիւ որեւէ բարեկարգումի նախաքայլն է:

Անդրադառնալով դատական իշխանութիւններուն՝ նախագահ Աուն

շեշտեց, որ դատական իշխանութիւնները որեւէ նախաձեռնութեան կրնան դիմել՝ կառչած մնալով օրէնքին ու կանոններուն:

«Լիբանան յանձնառու է արաբական բոլոր երկիրներուն, յատկապէս Ծոցի երկիրներուն հետ յարաբերութիւնները պահելու», հաստատեց ան:

Անկախութեան տօնին առիթով նախագահ Աուն շնորհաւորական հեռագիրներ ստացաւ Բրիտանիոյ Էլիզապէթ Բ. թագուհիէն, Սպանիոյ Ֆիլիպ 2. թագաւորէն, Մարոքի Մոհամեմ 2. թագաւորէն, Յորդանանի Ապտալլա Բ. թագաւորէն, Իրանի նախագահ Իպրահիմ Ռայիսիէն, Իտալիոյ նախագահ Սերժիօ Մաթարելլայէն, Չիլիաստանի նախագահ Շի Ճին Պիսկէն, Գերմանիոյ նախագահ Ֆրանք Վալթեր Շթայնմայերէն, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինէն եւ Զաթարի իշխան շէյխ Ապտալլա պըն Համատ Ալ Թանիէն:

Նշենք, որ երկրորդ տարին ըլլալով քաղաքացիական ընկերութիւնը կազմակերպեց քաղաքացիական տողանցք մը, որուն մասնակցեցան Պէյրութի նաւահանգիստի պայթումի պատճառով զոհուած նահատակներուն ընտանիքները, Պէյրութի հրշէջներու բաժանմունքը եւ մեծ թիւով քաղաքացիական ընկերութիւնը կազմող միութիւններ եւ խմբակներ:

Ակնբեր էր քաղաքացիական ընկերութեան կողմէ պատրաստուած եւ առաջին անգամ ըլլալով յայտարարուող «Ժողովուրդ, Բանակ, Դատական իշխանութիւն» կարգախօսին գործածութիւնը:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՐՏԻՆ

- ԶՄՇՄ-ի Լիբանանի շրջանի ննջեցեալներուն յիշատակին՝
- Կիրակոս եւ Ժաք-Սիմոն ՆԵՆԵՃԵԱՆՆԵՐ 200.000 լ. Դ.

ՌՈՒՍԻՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՍՈՒՐԻՈՅ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՈՒՐՔԱՆԻՈՅ ՄԷՋ



Ինչպես որեւէ այլ պետութիւն՝ Ռուսիան կը ձգտի իրագործել իր ազգային շահերը, որոնք հիմնուած են իր պատմութենէն՝ ռուս-թաթարական, ռուս-պարսկական, ռուս-թրքական պատերազմներէն ու Նախօլտէիի եւ Նախօլտէիի Գերմանիոյ Ներխուժումներէն բխող անոր աշխարհաքաղաքական փորձաքաղաքականութեան ծնունդ առած թշնամիներով շրջապատուած ըլլալու անապահովութեան զգացումին ու սպառնալիքներու վերաբերեալ ըմբռնումներուն վրայ:

Աշխարհագրական դիրքը, պատմական փորձաքաղաքական ու անոնցմով պայմանաւորուած՝ երկիրի անվտանգութեան նկատմամբ գերզգայնութիւնը պատճառ կը դառնան, որ Ռուսիան Արեւմուտքին կողմէ ընկալուի իբրեւ յարձակողական ու ծաւալապաշտական, երբ, ռուսական տեսանկիւնէն դիտուած, ան հակազդող է եւ նոյնիսկ՝ պաշտպանողական դիրքի վրայ:

Հակառակ աշխարհի վրայ մեծազոյն տարածքը ունեցող երկիրը ըլլալուն՝ Ռուսիան ունի տարածք մը, որուն պաշտպանելիութիւնը խոցելի է, մասնաւորաբար՝ անոր արեւմտեւ եւ արեւելեան կողմերէն: Խորհրդային եւ ժամանակաշրջանին համայնավար արքանեակ պետութիւնները իրենց գոյութեամբ «Արեւմտեան ճակատ»-ին վրայ աշխարհագրական պատուար մը կը կազմէին, սակայն այսօր այդ պատուարը ոչ միայն չկայ, այլ նաեւ Արեւմուտքը (ՕԹԱՆ եւ Եւրոպական Միութիւն) ղեպի արեւելք ծաւալած է եւ կը գտնուի Ռուսիոյ սահմանին մօտ, ինչ որ կու գայ ամրապնդելու Արեւմուտքը «ճաւաղապաշտ» նկատող համոզումը, եւ առաւել եւս կը բարձրացնէ ռուսական ղեկավարութեան մօտ երկրին խոցելիութեան զգացումն ու մտատանջութիւնը:

Մոսկուայի «Քառնքլի» կեդրոնի տնօրէն Տմիթրի Թրէնիւն կը նշէ, որ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին 1999-էն ի վեր ձգտած է երկու նպատակի՝ Ռուսիոյ միասնականութեան պահպանման ու համաշխարհային բեմի վրայ անոր մեծ տերութիւն ըլլալու կարգավիճակի վերականգնման:

Սուրիայէն Ուրդանիան՝ հարաւէն հիւսիս երկարող աշխարհագրական տարածքին մէջ, ուր հակառակորդը դարձեալ Արեւմուտքն է (Միացեալ Նահանգները, ՕԹԱՆ-ն ու անոր անդամ Թուրքիան), այդ երկու նպատակներու իրագործման ձգտումը մեծապէս կ'ազդէ Ռուսիոյ քաղաքականութեան վրայ:

Նշեալ տարածքին մէջ Ռուսիոյ պաշտպանութեան վերջին գիծը Զիւսիսային Կովկասն է, որ իր լեռնաշղթաներուն շնորհիւ՝ պաշտպանական բնական ու յարմար դիրք մը ունի: Զիւսիսային Կովկասէն ետք կը սկսին տափաստանները, որոնք պաշտպանական առումով բնականաբար խիստ խոցելի են: Ռուսիոյ պաշտպանութեան առաջին գիծը Հարաւային Կովկասն է՝ դարձեալ շնորհիւ իր լեռնաշղթաներուն:

Հարաւային Կովկասը սահմանակից է Ռուսիոյ հարաւային մրցակիցներուն՝ Թուրքիոյ եւ Իրանին, սակայն նաեւ՝ Զիւսիսային Կովկասին, ուստի անկիւս ապահովական խիստ կարեւոր նշանակութիւն ունի, նաեւ Սուրիայէն Զիւսիսային Կովկաս երկարող Հարաւ-Զիւսիս գիծը իրարու կապող ջղակն է:

Շրջանը կարելոր է նաեւ տնտեսական առումով, նկատի ունենալով, որ այդտեղ կը գտնուի քարիւղով հարուստ Կասպից ծովը, ինչպէս նաեւ Զիւսիս-Հարաւ եւ Արեւելք-Արեւմուտք առեւտրաշրջանառութեան ուղիներու

խաչմերուկն է, ուստի զարմանալի չէ, որ ինչպէս Զ.Ս. Կառմիճեւ իր 2010-ին լոյս տեսած «Կովկասի մէջ մեծ խաղը» երէկ, այսօր, վաղը» գիրքին մէջ կը նշէ, Ռուսիոյ պատմական ասանդութեան համաձայն, Հարաւային Կովկասը, արդի աշխարհաքաղաքական իր շահերուն կողքին, կը նկատուի «Ռուսիոյ պատմութեան ու ճակատագիրի անօտարելի մաս մը»:

Ահա այս ռազմավարական կարեւորութիւն ունեցող դիրքին ու հարաւիւսիս առանցքին վրայ է, որ կը գտնուի Արցախը, իսկ Ուրդանիան արդէն Զիւսիսային Կովկասէն ետք եկող է Ռուսիոյ խոցելի ու գերզգայուն արեւմտեան տարածքին մէջ է:

Երեք երկիրներուն՝ Սուրիոյ, Արցախի եւ Ուրդանիոյ կարեւորութիւնը աստիճանաբար կը մեծնայ, քանի ջարտեսիւ վրայ կը բարձրանանք դեպի հիւսիս՝ ղեպի ռուսական հողեր, եւ որքան կարելոր է տուեալ երկիրի մը աշխարհագրական դիրքը, այնքան անելի կարծր է Ռուսիոյ դիրքորոշումն ու հակազդեցութիւնը:

Այսպէս, Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Սերկէյ Ռիսայեւով 13 ապրիլ 2021-ին յայտարարեց. «Միացեալ Նահանգներն ու անոնց ՕԹԱՆ-ի դաշնակիցները Զիւսիս տրամադրած իրենց զինուորական օժանդակութիւնները անելցնելով՝ Ուրդանիան դիտարեալ կերպով կը վերածեն վառողի տակառի», ընդգծելով, որ՝ «Ուրդանիոյ մէջ մագլցում արձանագրուելու պարագային, մեր առաւելագոյն ջանքը պիտի գործադրենք երաշխաւորելու Ռուսիոյ անվտանգութիւնն ու անոր քաղաքացիներուն ապահովութիւնը, սակայն մագլցումի պատասխանատուութիւնը արժողութեամբ պիտի կրեն Քիւնն ու անոր արեւմուտքի գործընկերները»:

Ռուսիոյ Նախագահի բանբեր Տմիթրի Փեսքով, իր կարգին, 3 նոյեմբեր 2021-ին, անդրադառնալով Ուրդանիոյ սահմանին վրայ առաւելական զօրքերու կուտակումներու վերաբերեալ տեղեկութիւններուն ու Արեւմուտքէն ինչո՞ղ ահագանգին, ըսաւ. «Ռուսիան, ՕԹԱՆ-ի եւ շարք մը այլ պետութիւններու թշնամական ծաւալապաշտական հակամարտութիւններու լոյսին տակ, քայլեր որդեգրած է եւ պիտի շարունակէ որդեգրել» երաշխաւորելու համար իր անվտանգութիւնը»: «Շարք մը այլ» ըսելով՝ ան նկատի ուներ նաեւ Թուրքիան: Սուրիոյ եւ Արցախի վերաբերեալ ռուսական կողմի յայտարարութիւնները այսպիսիք չեն, այլ անելի դիւանագիտական են:

Սուրիոյ մէջ Ռուսիոյ դերակատարութիւնը հիմնուած է իրեն դաշնակից եղող վարչակարգին դէմ կռուող փիւսական ահաբեկչական խմբաւորումներուն Զիւսիսային Կովկասի եւ ընդհանրապէս Նախկին խորհրդային տարածքի շրջաններուն հետ կապ ունենալուն եւ այդ իրողութեան ներկայացուցած վտանգին վրայ, ուստի այդտեղ կիրարկուող կանխարգիւման քաղաքականութիւն մըն է, որ միաժամանակ կ'իրագործէ տաք ջուրեր իջնելու ռուսական դարաւոր երազը:

Այս բոլորէն ետք կարելի է եզրակացնել, որ Միացեալ Նահանգներուն եւ ՕԹԱՆ-ի՝ Սեւ ծովու մէջ վերջին քայլերուն եւ հիւսիսային Սուրիոյ մէջ ՕԹԱՆ-ի անդամ Թուրքիոյ ներկայութեան ու քիւրտներուն դէմ ծրագրած զինուորական գործողութեան նպատակը նշեալ աշխարհագրական կէտերուն վրայ Ռուսիոյ հարաւէն հիւսիս երկարող պաշտպանական գիծի մասնաւորութիւն կամ առնուազն թիրախաւորումն է:

ՎԱՐԴԱՍ ԷՍԻԽԵԱՆ

ՏԷՐ ՊԻՏԻ ՄՆԱՔ ՌՈՒՆԸՆԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

25-26 ապրիլ 1920-ին, Համաշխարհային Ա. պատերազմէն յաղթական դուրս եկած Դաշնակից պետութիւններուն եւ անոնց զօրավիգ ուժերու Գերագոյն խորհուրդը երկու խնդրանք ներկայացուց Միացեալ Նահանգներու Նախագահ Վուորը Ուիլսընին.

- ստանձնել Հայաստանի հովանաւորութիւնը,
- իրաւարար վճիռով որոշել Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանը:

Առաջինը անմիջապէս մերժեց Միացեալ Նահանգներու Ծերակոյտը: Նախագահը իրաժարեցաւ:

Երկրորդ խնդրանքը պաշտօնապէս ամրագրուած էր Փարիզի խաղաղութեան վեհաժողովին, Փրանսայի վարչապետ եւ արտաքին գործոց Նախարար Ալեքսանտր Միլերանի՝ 27 ապրիլ 1920-ի պաշտօնագիրով: Միւսնոյն խնդրանքը, 89-րդ յօդուածի տեսքով ներառուեցաւ Սեւրի դաշնագիրին մէջ: Հայաստանի, Թուրքիոյ, ինչպէս նաեւ դաշնագիրը ստորագրող շուրջ քսան պետութիւններու անունով յղուեցաւ Միացեալ Նահանգներու Նախագահին:

Միացեալ Նահանգներու Նախագահը, իրաւասու կառոյցներ հայցը մանրագին ուսումնասիրելէ ետք, կայացուցին իրաւարար վճիռը:

Ըստ Սեւրի հայցադիմումին, գայն ստորագրող կողմերը Միացեալ Նահանգներու Նախագահին իրաւարարի հայեցողութեան կը ձգէին Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանագիծ որոշումը, Երզնումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթիսի Նահանգներու տարածութիւնները, ինչպէս նաեւ ղեպի Սեւ ծով Հայաստանի եւ ճշդելու հարցը:

Նախագահ Վուորը Ուիլսըն 22 նոյեմբեր 1920-ին ներկայացուց իր որոշումը: Համաձայն Ուիլսընի իրաւարար վճիռին, Հայաստան մօտաւորապէս 103.599 քառ. քմ. տարածութիւն մը պիտի ունենար ղեպի ծով ելքով:

Ուիլսընի իրաւարար վճիռը թուրքի վրայ կը մնայ առ այսօր, որովհետեւ քեմալական Թուրքիան, յենելով խորհրդային Ռուսիոյ ռազմաքաղաքական աջակցութեան վրայ եւ օգտուելով արեւմտեան պետութիւններուն միջեւ յամառ պայքարէն, խախտեց Մուտրոսի գինադադարը, ոտնահարեց Սեւրի դաշնագիրը: Դաշնակիցներէն անտեսուած Հայաստանի Հանրապետութիւնը մէն միւսակ մնաց քեմալական բանակներուն առջեւ: Յաջորդական պարտութիւններ կրեց եւ 2 դեկտեմբեր 1920-ին իշխանութիւնը յանձնեց պոլշեկներուն: Այս միջոցին Հայաստանի Հանրապետութիւնը ներկայացնող որոշ անդամներ ստիպողութեան տակ, 3 դեկտեմբեր 1920-ին ստորագրեցին Ալեքսանտրապոլի համաձայնագիրը, ուր իրաժարեցան Սեւրի համաձայնագիրէն: Միւս կողմէ, յատկանշական է իմանալ, որ թրքական պատուիրակութիւնը նոյնպէս չէր ներկայացներ Թուրքիոյ օրինական իշխանութիւնը: Ըստ միջազգային օրէնսդրութեան, Ալեքսանտրապոլի համաձայնագիրը ի սկզբանէ ապօրէն էր եւ անվաւեր:

Ուիլսընի իրաւարար վճիռը պարտադիր յանձնառութիւն կը մնայ զոյգ կողմերուն համար: Անկա չունի պայմանաժամային սահմանափակում: Անոր կարգավիճակ կախեալ է վճիռին հետագայ ճակատագիրէն:

Լա Յէի մէջ (Հոլանտա) կայացած միջազգային խորհրդաժողովը (1907), ուր ամփոփուած է ամրագրուած է իրաւարար վճիռներու կարգավիճակը, պայմանաժամային ոչ մէկ պարտաւորութիւն կը դնէ յանձնառու կողմերուն առջեւ: Սակայն կարելի չէ իրաժարի գործադրութիւնը:

Ըստ միջազգային իրաւունքի յօդուածներուն, կողմերը փոխադարձ համաձայնութեամբ իրաւարար վճիռի որոշումին կը ներկայացնեն իրենց վճիռ, միակգամայն կ'ընդունին, որ վճիռը ընդունելի պիտի ըլլայ իրենց համար: Կ'արժէ նշել, որ Հայաստան եւ Թուրքիա առանձին ներկայացուցած են իրաւարարութեան հայցը: Անոնց կողքին հայցը ներկայացուցած են տասնվեց երկիրներ: Նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռը պարտադիր է բոլոր հայցորդներուն համար՝ Մեծն Բրիտանիա. Զանաւա, Աւստրալիա, Նոր Զելանտա, Հարաւային Աֆրիկէ, Հնդկաստան, Փաքիստան, Պանկատեշ, Ֆրանսա, Իտալիա, Ճապոն, Պէրճեք, Յունաստան, Լեհաստան, Փորթուգալ, Ռումանիա, Զէմիա, Սլովաքիա, Սերպիա, Խրուսիա, Սլովենիա, Պոսնիա, Զերցեկովիւն, Մակեդոնիա եւ Մոնթենեգրո:

Միացեալ Նահանգներ նոյնպէս յանձնառու կը մնան իրաւարար վճիռին գործադրութեան, որովհետեւ Միացեալ Նահանգներու Նախագահի որեւէ դիրքորոշում կը հանդիսանայ երկրին դիրքորոշումը:

Հայաստանի Հանրապետութիւնը այսօր, իբրեւ ՄԱԿ-ի լիիրաւ անդամ պետութիւն, կրնայ ՄԱԿ-ի միջազգային դատարանին միջոցով (ըստ Միջազգային ատենակալութեան) հաւաստել Նախագահ Վուորը Ուիլսընի իրաւարար վճիռին վաւերականութիւնը եւ պահանջել վճիռով Հայաստանին յատկացուած տարածութիւնը:

Նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռը միջազգային այն փաստաթուղթն է, որ ճանչցաւ եւ ամրագրեց Հայաստանի սահմանները:

Պահանջատիրական մեր երթք այսօր կը վերաւորողենք պետականօրէն տրեկանգնելով ուիլսընեան սահմաններով ճշդուած ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանին:

ԱՅՐՈՆ ԸՈՐԵՏԵԱՆ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԴԱՐԱՅԻ ԻՐԱՌՈՒՆԸ ԱՆՍԱՄԱՆՅԵԼԻ Է

22 նոյեմբեր 2021: Լիբանանի անկախութեան 78-րդ տարեդարձ, միաժամանակ անկախ Հայաստանի սահմաններու մասին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ Վուորը Ուիլսընի իրաւարար վճիռի իրաւարարական 101-րդ տարեդարձ:

Հակառակ տիրապետող կարծիքին, որ Նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռը Սեւրի դաշնագիրի յաւելումն էր, պետք է կարեւորութեամբ նշել, որ այս իրաւարար վճիռը անկախ որոշում մըն է, վաւեր՝ ստորագրման եւ կնքման պահէն սկսեալ: Արդարեւ, Նախագահ Ուիլսընի լիազօրութիւնը տրուած է անելի վաղ, Սան Ռեմոյի խորհրդաժողովի օրերուն (19-26 ապրիլ 1920), դաշնակից տերութիւններու Գերագոյն խորհուրդին կողմէ: Սեւրի դաշնագիրի 89-րդ յօդուածը կը յիշատակէ ՎԱՄ-ի Նախագահին տրուած լիազօրութիւնը. «Թուրքիան եւ Հայաստանը, ինչպէս նաեւ պայմանաւորուող միւս կողմերը կը համաձայնին Երզնումի, Տրապիզոնի, Վանի, Պիթիսի Նահանգներուն մէջ Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ սահմանագրութեան թողնել ՎԱՄ Նախագահի իրաւարարութեան եւ ընդունիլ անոր որոշումը, ինչպէս նաեւ կը համաձայնին այն բոլոր միջոցառումներուն հետ, որոնք ան կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալուն եւ յիշեալ սահմանագիծը իրաւոր օսմանեան որեւէ տարածք ապագինելու վերաբերեալ»:

Սեւրի դաշնագիրի ստորագրութիւնը (10 օգոստոս 1920) շատ ուշացաւ: Դաշնակից տերութիւններուն միջեւ տարակարծութիւնները եւ անոնց շահերու հակասութիւնները առիթ ընծայեցին մէկ կողմէ Թուրքիոյ մէջ քեմալական շարժման արմատացման եւ միւս կողմէ խորհրդային Ռուսիոյ Կովկաս վերադարձին: Ուիլսընի կողմէ Արեւմտեան Հայաստանէն 90 հազար քառակուսի քիլոմետրի յաւելումով 17330 քառ. քմ-ի վրայ, կ'ունենայինք 161330 քառ. քմ տարածքով միացեալ Հայաստան մը, որ հայ ժողովուրդի դարաւոր պայքարի յաղթական պատկուծը կրնար հանդիսանալ: Սակայն այս պայմանագիրը կը բախէր թե՛ քեմալական Թուրքիոյ եւ թե՛ խորհրդային Ռուսիոյ շահերուն: Երեկ թշնամի, բայց արդէն դաշնակիցներու վերաբերումին առիթով եղբայրացած Հայաստանի երկու հարեակները պիտի չհանդուրժէին իրենց անցեալին նուաճած հողամասերու օտարումը:

Նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռը կրնար իրականանալ միայն այն պարագային, երբ դաշնակիցները զինու զօրութեամբ պարտադրէին անոր գործադրութիւնը: Սակայն դաշնակից տերութիւններէն ոչ մէկը տրամադրեալ էր ուժով իրագործելու իրենց իսկ ընդունած արդարութիւնը: Ամերիկեան քննարկները կողմէ Հայաստանի **մասնաւոր** մերժումը դարձաւ անկախութեան կրողատիւ դատավճիռը: Փոքրիկ Հայաստանը, Ցեղասպանութենէն ետք իրաւունքով մոխիրներէն յառնած պետութիւնը չէր կրնար իր զինուած սահմանափակ ուժերով կռուիլ երկու ճակատին վրայ ու գտնելի վրայ իրագործել ինչ որ գրուած էր թուրքի վրայ:

Զօրծարտուած բայց միշտ վաւերական իրաւարար վճիռը կը հանդիսանայ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ հայ ժողովուրդի անժամանցելի իրաւունքներու միջազգային ճանաչումը:

Անկախ Հայաստանի իշխանութիւնները չունէին պատրասեց, որ Սեւրի դաշնագիրն ու Նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռը պիտի կրենան գործադրուած տեսնել: Մոսկուայի մէջ, Լեւոն Շանթի պատուիրակութեան անդամ Համբարձում Տերտերեանը Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Լեւոն Կարախանին կը յայտնէր. «Առանձնապէս այն համոզումը չունեմ, որ դաշնակից պետութիւնները զինու զօրութեամբ Տաճկաստանը պիտի գրաւեն եւ սկսուողի վրայ որուած մատուցեն մեզ: Ես այն համոզումն ել չունիմ, որ ներկայ Հայաստանը ի վիճակի պիտի լինի զինուորական իր միջոցներով տր դառնալու տաճկահայկական Նահանգներին: Բայց եւ այնպէս, չենք կարող իրաժարել դարաւոր մեր արդարացի իրաւունքներին»:

Ներկայ անցողիկները եւս կը վկայեն, որ պարտուած ու տկարացած Հայաստանը չի կրնար իր զինուորական միջոցներով դէմ դնել Արցախեան նկուստեան նկրտումներին: Բայց եւ այնպէս աներկբայօրէն ճիշդ է, որ չենք կրնար իրաժարիլ դարաւոր մեր արդարացի իրաւունքներէն:

ՏԻՐԱՆ ԺԱՆՊԵՆԵԱՆ

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ - ԿԱՍԷ»



ՄԻԱՍԻՆ

Լիբանանի ճգնաժամը կը շարունակուի: Նկատի ունենալով, որ Լիբանանի պետութեան կողմէ հատուցման քարտի ծրագիրը գործնականացումը կ'ուշանայ, «Արտակարգ իրավիճակներու մարմին» - ԿԱՍԷ-ը, գործակցաբար Հայկական երեսփոխանական գրասենեակին հետ, անցնող երկու տարիներուն մնողդէկի, առողջապահական, Զորուն ժաիրի դիմակայման, դեղորայքի, ընտանիքներու կենցաղային կարիքներէն, անվտանգ պիտուքներու համար իր կատարած օժանդակութեան հետեւողական աշխատանքներէն ետք, պիտի շարունակէ իր ծառայութիւնները: Այս աշխատանքները եւ ծառայութիւնները համակարգելու համար «ԿԱՍԷ»-ը արդէն իսկ սկսած է հայորդիներուն տրամադրել յատուկ քարտ մը, որուն ճամբով յառաջիկայ փուլին կարելի պիտի ըլլայ օգտուիլ իր օժանդակութեան ծրագիրներէն: Ցաւեալ մանրամասնութեանց համար դիմել ՀՀ-ի ակումբները:

100% Լիբանան, ARF Lebanon, Tashmag Գրտաշնաբան Գրտաշնաբան

ՄԵՌԵԼԱԾԻՆ ՆՈՐՄԱՐՑԱԽՅԻ ՆԵՐՔԻՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պերլինի վեհաժողովում (1878թ.) Ռուսաստանի պատուիրակութեան ղեկավար Ալեքսանտր Կորչաքովը վեթօ դրեց Թուրքահայաստանի ինքնավարութեան ծրագիրը քոկրետսի օրակարգ ընդգրկելու վրայ՝ պատճառաբանելով, թե հայերն անկախութիւն չեն ուզում։ Մկրտիչ Խրիմեանի այն հարցին, թե ինչո՞ւ 16-րդ յօդուածը դարձաւ 61, Ռուսաստանի անունից Սան Սթեֆանոյի պայմանագիրը ստորագրած կոմս Իկնատեւը պատասխանել է, որ, «Չայրիկ, 16-ը գրուել է ռուսների, այլ ոչ թե՛ հայերի համար»։ Անցաւ 142 տարի։

Չայաստանի, Ռուսաստանի եւ Ազրայեյճանի ղեկավարների 2020 թուականի Նոյեմբերի 9-ի համատեղ յայտարարութեան (այսուհետ՝ Ցայտարարութիւն) 7-րդ կետի համաձայն, Ներքին տեղահանուած անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով երագոյն յանձնակատարի գրասենեակի վերահսկողութեան ներքոյ։

Սկզբունքայնօրէն գեղեցիկ է հնչում այս **Նորմը**, բայց ո՞ւմ համար է գրուել եւ ինչպե՞ս պետք է աշխատի այն, Չայաստանի եւ ԱՅ անվանագութեան տեսակետից ի՞նչ խութեր կան թաքնուած վերապետական այս **Նորմի** տակ, ո՞վ, ե՞րբ եւ ինչպե՞ս պետք է կատարի իրաւական **Նորմի** պահանջները ու դրանք ի՞նչ հետեւանքներ կ'ունենան իրենց բնակավայրերը կորցրած արցախահայութեան համար։

Նախ Նշենք, որ «Միջազգային պայմանագրերի մասին» Վիեննայի հռչակագրի եւ Չայաստանի Չանրապետութեան «Միջազգային պայմանագրերի մասին» օրէնքի համաձայն, պետութիւնների միջեւ ցանկացած գրաւոր համաձայնութիւն, որը ձեւակերպուել է պայմանագրի, համաձայնագրի, հռչակագրի, յուշագրի, արձանագրութեան, Նոթաների փոխանակման կամ միջազգային փորձում ընդունուած այլ անուանմամբ փաստաթղթի տեսքով, միջազգային պայմանագիր է համարւում։ Ցայտարարութեան իրաւական **Նորմ**երը ոչ թե ներպետական, այլ միջազգային իրաւունքից բխող **Նորմ**եր են, որոնց կարգաւորման առարկան միջպետական եւ այլ միջազգային յարաբերութիւններ են։ Ուստի հայ ժողովրդի վզին փաթաթուած այդ աղետալի Չամաձայնութիւնը միջազգային պայմանագիր պետք է համարել։ Ինչեւէ։

Ցայտարարութեան 7-րդ կետի համաձայն, Ներքին տեղահանուած անձինք եւ փախստականները վերադառնում են Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակի վերահսկողութեան ներքոյ։

Այս կետում կիրառուած՝ «Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ», «Ներքին տեղահանուած անձինք», «փախստականներ» եւ «ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագոյն յանձնակատարի գրասենեակ» հասկացութիւններից ոչ մէկի սահմանումը Ցայտարարութեան մէջ չի տրուած։ Դրանցից վիճայարոյցը, այսպէս ասած՝ քաղաքական եւ իրաւական գլուխկոտրուկը «Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ» եզրոյթն է։ Ի՞նչ պէտք է հասկանալ դրա տակ, եւ ի՞նչ են նկատի ունեցել Ցայտարարութիւնը ստորագրողները։

Դիմենք պատմութեանը։ 1813 թուականին պատմական Արցախի տարածքը կցուեց ցարական Ռուսաստանին, որի տիրապետութեան առաջին վեց տասնամեակների ընթացքում կայսրութեան տարածքում մի շարք վարչատարածքային փոփոխութիւններ կատարուեցին։ Այսպէս, Շուշիի խանութիւնը վերացնելուց յետոյ (1822թ.) նրա տարածքի վրայ ստեղծուեց Նոր վարչական միաւոր՝ «Ղարաբաղի մարզ» անուանումով, որտեղ մտցուեց ռուսական կառավարում։ Ղարաբաղը, սկզբում որպէս մարզի, իսկ այնուհետեւ՝ Շուշիի գաւառի կարգավիճակով, մինչեւ 1846թ. մտնում էր Կասպիական մարզի, 1846թ.՝ Շամախու, 1859թ.՝ Պարսի, 1867թ.՝ Ելիզավեթպոլի (անձակ) նահանգների կազմի մէջ։ Պատմական Արցախի տարածքը մինչեւ 1869թ. հիմնականում մտնում էր Շուշիի գաւառի եւ, մասամբ, Չանգեզուրի գաւառի մէջ։ 1869թ. Շուշիի գաւառը մասնատուեց, եւ նրա հիւսիս-արեւելեան մասում ստեղծուեց Նոր՝ Ձիւանշիրի գաւառը, որի մէջ ներառուեցին Ջրաբերդի (Մարտակերտի շրջանի մի մասը) եւ Գիւլիստանի (Շահումեանի շրջանը) մեկիբութիւնների տարածքները, ինչպէս նաեւ՝ Պարտաւի եւ Թարթառի թաթարաբնակ շրջանները։ 1873թ. Շուշիի գաւառը վերստին մասնատուեց եւ նրա հարաւային մասում ստեղծուեց Նոր՝ Ջաքարայիկի գաւառը՝ ներառելով իր մէջ Դիզակի (Չարդուբի շրջանի մի մասը) մեկիբութեան տարածքը եւ Կարեազինոյի (Ֆիզուլիի) ու Բայլականի թաթարաբնակ շրջանները։ Փաստօրէն պատմական Արցախի տարածքը բաժանուեց երեք գաւառների միջեւ, եւ կայսրութեան փլուզման Նախօրեակին Շուշիի գաւառի մէջ մտել են միայն Վարանդայի մեկիբութեան (Ներկայիս Արցախի Չանրապետութեան Մարտունի եւ Շուշիի շրջանները), Խաչէնի մեկիբութեան (Ասկերանի շրջանը եւ Մարտակերտի շրջանի մի մասը), ինչպէս նաեւ՝ թաթարաբնակ Աղշաբերդի շրջանը։

1917 թուականի փետրուարեան յեղաշրջման պատճառով ցարական ինքնակալութիւնը տապալուեց, եւ դեպքերն Անդրկովկասում անկանխատեսելի կերպով փոփոխուեցին։ Անելի քան մէկ տարի յետոյ ստեղծուեցին վրացական, ազրպեյճանական եւ հայկական հանրապետութիւնները։ Պահը չափազանց յուրջ էր, ուստի հայկական Ղարաբաղի քաղաքական ուժերի ղեկավարները կարողացան իրենց ձեռքը վերցնել երկրամասի կառավարման վարչական ղեկը։

Ղարաբաղի հայութեան առաջին համագումարը, որը տեղի ունեցաւ 1918 թուականի յուլիսի 22-ին, Շուշի քաղաքում, Ղարաբաղը յայտարարեց անկախ վարչաքաղաքական միաւոր, ընտրեց Ազգային խորհուրդ եւ եօթ հոգեւոր բաղկացած կառավարութիւն՝ դրանով իսկ հռչակելով իր «անկախութեան իրաւունքը»։ Կառազումարի աշխատանքների մասնակցել էլ Դիզակի, Վարանդայի, Խաչէնի եւ Գիւլիստանի (Շահումեանի շրջանը) գիւղական հասարակութիւնների կողմից ընտրուած պատգամաւորները։ Անել է թե՛ համագումարի ընդունած որոշումները տարածուել են նաեւ Գիւլիստանի վրայ։

«Լեռնային Ղարաբաղ» եզրոյթին առաջին անգամ հանդիպում ենք Ղարաբաղի հայութեան 7-րդ համագումարի նիւթերում, որտեղ 1919 թուականի օգոստոսի 22-ին ընդունուեց մի փաստաթուղթ, որը կրում էր «Լեռնային Ղարաբաղի հայութեան ժամանակաւոր համաձայնութիւնը Ազրպեյճանի կառավարութեան հետ» յորջորջումը։ Փաստաթուղթը, կազմուած լինելով 26 կետից, ստորագրել են համագումարից լիազօրուած 15 պատգամաւորները եւ այն վաւերացուել է Ազրպեյճանի կառավարութեան ներկայացուցչի կողմից։ Փաստաթղթի 2-րդ կետից նկատուի է, որ «Լեռնային Ղարաբաղ» միաւորի տակ նկատի է առնւում Շուշիի, Ջաքարայիկի եւ Ձիւանշիրի գաւառների լեռնային մասը (Դիզակը, Վարանդան, Խաչէնը եւ Ջրաբեր-

դը), որտեղ բնակիչները հայեր են, ժամանակաւորապէս գտնւում է Ազրպեյճանի Չանրապետութեան սահմաններում։ Չարկադրաբար նման քայլ կատարելով՝ հայերը յոյս ունեին Ղարաբաղի լեռնային մասի կարգավիճակի հարցը լուծել Փարիզի խաղաղութեան վեհաժողովում։ Չետագայ բոլոր փաստաթղթերում, այդ թւում՝ արցախահայութեան 8-10-րդ համագումարներում, «Լեռնային Ղարաբաղ» եզրոյթը կեանքի իրաւունք ստացաւ։

Ղարաբաղում խորհրդային կարգերի հաստատումից յետոյ (1920թ. մայիս), երբ ստեղծուեցին գաւառային յեղկոմներ, Ջրաբերդի շրջանը մտաւ Ձիւանշիրի գաւառի մէջ, Դիզակիւը՝ Ջաքարայիկի, իսկ Խաչէնն ու Վարանդան մնացին Շուշիի գաւառում։ Իսկ երբ 1920թ. յունիսին Լեռնային Ղարաբաղի յեղկոմը միաւորուեց Դաշտային Ղարաբաղի յեղկոմի հետ, առաջինը, մինչեւ 1923թ. որպէս վարչական ինքնուրոյն եւ միասնական միաւոր, դադարեց գոյութիւն ունենալ։ Աւելորդ չէ Նշել, որ Չանգեզուրը Չայաստանին անցնելու կապակցութեամբ, նրա արեւելեան մասում Ազրպեյճանը 1920թ, ստեղծեց Ղուբաթլիի գաւառը, որի մէջ էին մտնում նաեւ Ղարաղշլաղ եւ շրջակայ հայկական գիւղերը։

Խորհրդային Ռուսաստանի ու քեմալական Թուրքիայի սիրախաղերի արդիւնքը եղաւ միջազգային իրաւունքի տեսանկիւնից իրաւական **աթքի** ուժ չունեցող Ռուսաստանի Կոմունիստական (պոլշեիկեան) կուսակցութեան կովկասեան պիւրոյի 1921 թուականի յուլիսի 5-ի կուսակցական որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ազրպեյճանի սահմաններում թողնելու մասին՝ նրան տրամադրելով մարգային ինքնավարութիւն։ Արցախահայութեան համար ստորուսցուցիչ այդ որոշմամբ Ազրպեյճանը պէտք էր որոշեր մարզի սահմանները եւ ինքնավարութեան շրջանակները։ Սակայն Ազրպեյճանը չէր շտապում։ Երկար ձգձգումներից յետոյ Ազըպեյճանի Կենտրոնական գործադիր կոմիտեն 1923թ. յուլիսի 7-ին ընդունեց յայտարարութիւն՝ Լեռնային Ղարաբաղի հայկական մասից ինքնավար մարզ կազմաւորելու մասին, որին տրուեց «Ինքնավար Մարզ Լեռնային Ղարաբաղի» (ԻԱԼՂ) անուանումը, եւ այն կիրառուեց մինչեւ ԽՍՀՄ 1936թ. սահմանադրութեան ընդունումը, որից յետոյ երկրամասը վերանուանեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ» (ԼՂԽՂ)։ 1923թ. օգոստոսի 15-ի մարզի տարածքում ստեղծուեցին 4 շրջաններ՝ Ջրաբերդի (Մարտակերտ գիւղկենտրոնով), Խաչէնի (Խանքենդի գիւղկենտրոնով), Վարանդայի (Ճարտար գիւղկենտրոնով) եւ Դիզակի (Չարդուբ գիւղկենտրոնով)։ Մէկ տարի յետոյ ստեղծուեց Շուշիի շրջանը (Շուշիի քաղաքային կենտրոնով)։ Չետագայ տարիներին Ջրաբերդի շրջանը վերանանուեց Մարտակերտի, Վարանդայինը՝ Մարտունի, Դիզակիւը՝ Չարդուբ, Խաչէնիւը Ստեփանակերտ։ Վերջինս 1978թ. վերանուանուեց Ասկերանի շրջան։

Ինքնավար մարզի սահմանները վերջնականապէս ճշդուեցին միայն 1925 թուականին։ Իսկ ինչպէ՞ս որոշեցին։ Ի կատարումն Ազրպայեյճանի Կենտգործկոմի 1923թ. յուլիսի 7-ի որոշման՝ ինքնավար մարզի կարգավիճակի վերաբերեալ խորհրդային տեսակի առաջին փաստաթուղթն Ազրպեյճանի կողմից մարզին «շնորհուած» սահմանադրութիւնն էր, որը յոյս տեսաւ կուսակցական բարձրագոյն մարմինի «Կոմունիստ» հայերէն թերթի 1924 թուականի յուլիսի 6-ի համարում։ Սահմանադրութեան համաձայն, բացի Շուշի եւ Ստեփանակերտ քաղաքներից, ԼՂԽՄ կազմի մէջ մտցուել էին Շուշիի գաւառից՝ 115, Ձիւանշիրի գաւառից՝ 52, Կարեազինոյի գաւառից՝ 30 գիւղ եւ Ղուբաթլուի գաւառից՝ Ղարաղշլաղ գիւղը (Բերդաձորը)՝ շրջակայ գիւղերով։ Չետագայում մարզի արտաքին սահմաններն այնպէս որոշեցին, որ 11,5 հազար քառ. քմ տարածք ունեցող պատմական Արցախի Նահանգից թողնուեց 4,4 հազար քառ. քմ-ը։ Մարզից կտրեցին դաշտային բերդի հողերը, Արցախի հիւսիսային շրջանները, շփման ոչ մի կետ չթողնելով մայր հայրենիքի հետ։

Ինքնավար մարզը ԽՍՀՄ ժողովուրդների սոցիալիստական ազգային պետականութեան ձեւերից մէկն էր։ Պետական շինարարութեան վարչաքաղաքական ինքնավարութեան վերին օղակն ինքնավար հանրապետութիւնն էր, իսկ ստորին օղակը՝ ինքնավար **օկրուգը** (մարզը, Ա)։ Մինչեւ Խորհրդային Միութեան փլուզումը Լեռնային Ղարաբաղն ինքնավար մարզի կարգավիճակով գտնւում էր Խորհրդային Ազրպեյճանի կազմում։ Սակայն Արցախի հայերը չեն հաշտուել այդ կարգավիճակի հետ եւ տասնեակ տարիներ մշտապէս պայքարել են մայր հայրենիքի հետ վերամիաւորուելու համար։

Երբ Խորհրդային Միութեան մայրամուտին, Ազրպեյճանը 1991թ. օգոստոսի 30-ին յայտարարեց ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին, Արցախին այլ քան չէր մնում՝ բացի այն, քան՝ հրաժեշտ տալ Խորհրդային Ազրպեյճանին, ուստի զգալով պահի լրջութիւնը եւ իմըք ընդունելով ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի կողմից 1990թ. ապրիլի 3-ին ընդունուած՝ ԽՍՀՄ-ի կազմից միութեանկան հանրապետութիւնների դուրս գալու մասին օրէնքի պահանջները՝ երկրամասի ժողովուրդը դիմեց միակ ճիշտ եւ իրաւական տեսանկիւնից անխոցելի քայլին. ժողովուրդական պատգամաւորների ԼՂ մարզային եւ Շահումեանի շրջանային համատեղ խտաշրջանը 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունեց հռչակագիր՝ ինքնավար մարզի եւ յարակից Շահումեանի շրջանի սահմաններով Լեռնային Ղարաբաղի Չանրապետութիւն հռչակելու մասին։ Սակայն Ազրպեյճանը չիանդուրծեց դա եւ նրա Գերագոյն խորհուրդը 26.11.91թ. ընդունեց օրէնք՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը լուծարելու, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ կազմաւորելու մասին» Ազրպեյճանի Կենտգործկոմի 1923թ. յուլիսի 7-ի յայտարարութիւնը եւ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» 1981թ. յունիսի 16-ի Ադր. ԽՍՀ օրէնքն ուժը կորցրած ճանաչելու մասին։ Դա՝ այն դեպքում, երբ ԼՂԻՄ-ի մասին օրէնքն 3-րդ յօդուածի համաձայն, «ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխուել առանց ժողովրդրական պատգամաւորների Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի խորհրդի համաձայնութեան»։

Վերոնշեալ հակասահմանադրական օրէնքի համաձայն, Ստեփանակերտ, Մարտակերտ եւ Մարտունի քաղաքները վերանուանուեցին համապատասխանաբար՝ Խանքենդի, Ադդարաւ եւ Խոջաւանդ թրքախուճ անուններով։ Նախկին ինքնավար մարզի տարածքը մտցուեց Ադդարայի (Մարտակերտի շրջանը), Խոջաւանդի (Մարտունու եւ Չարդութի շրջանները), Խոջալուի (Ասկերանի շրջանը) եւ Շուշիի շրջանների մէջ, իսկ Ստեփանակերտը (Խանքենդին) համարուեց հանրապետական ենթակայութեան քաղաք։ Ինքնավար մարզը լուծարելու մասին օրէնքը ջնայած ճանաչուեց հակասահմանադրական եւ ԽՍՀՄ սահմանադրական վերահսկողութեան կոմիտէի 1991թ. Նոյեմբերի 27-ի որոշմամբ վերացուեց, սակայն այդ որոշումն

Ազրպեյճանի համար որեւէ նշանակութիւն չունեցաւ, քանզի խորհրդային կայսրութիւնն արդէն հոգեվարքի մէջ էր։ Չետագայում բոլոր օրինական իրաւական **աթք**երում, այդ թւում՝ երկրի հիմնական օրէնքում, Ազրպեյճանը հրաժարուեց օգտագործել «Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ» վարչատարածքային հասկացութիւնը։ Բացառութիւն է կազմում Ազրպեյճանի՝ «Ռազմական հայեցակարգի մասին» օրէնքը (2010թ.), որում ամրագրուած է, որ իբր թե՛ Չայաստանն «բռնագաւթել է Լեռնային Ղարաբաղը եւ նրա յարակից շըրջանները»։

Արցախի Չանրապետութիւնը պատուով դուրս եկաւ առաջին պատերազմից, որի արդիւնքում նրա տարածքը շարժընթաց ապրեց եւ այն ամրագրուեց «Լեռնային Ղարաբաղի Չանրապետութեան վարչատարածքային բաժանման մասին» օրէնքով, ըստ որի, հանրապետութեան տարածքը ներառում է Ստեփանակերտ քաղաքը, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու, Չարդութի, Շուշիի, Շահումեանի եւ Քաշաթաղի շըրջանները։ Նոյն օրէնքի համաձայն, արտաքին սահմանների առումով, Մարտակերտի եւ Մարտունու շրջանները սահմանակցում են Ազրպեյճանի Չանրապետութեանը, Չարդութի շըրջանը՝ Ազրպեյճանի Չանրապետութեանը եւ Արաքս գետով՝ Իրանի Իսլամական Չանրապետութեանը, Քաշաթաղի շրջանը՝ Իրանի Իսլամական Չանրապետութեանը եւ Չայաստանի Չանրապետութեանը, Շահումեանի շրջանը՝ Ազրպեյճանի Չանրապետութեանը եւ Չայաստանի Չանրապետութեանը։ Եթէ Նախկինում ԼՂՅ շուրջ տարածքներին տրում էր ազատագրուած կամ գրաւեալ տարածքներ, անվտանգութեան գօտի կամ որեւէ այլ ձեւակերպում, ապա հետագայում դրանք ԱՅ տարածքի անբաժանելի մասը կազմեցին՝ ամրագրուելով երկրի Չիմնական օրէնքով։ Այդպիսի տարածքով (12.000 քառ. քմ) 2020թ. սեպտեմբերի 27-ին պատերազմի մէջ մտանք Ազրպեյճանի, Թուրքիայի եւ նրանց ցանկցող միջազգային ահաբեկչութեան հրոսակախմբերի հետ, որի աղետաբեր հետեւանքներն ամրագրուեցին Ցայտարարութեան 9 կետերում։

Ինչպէս նկատելի է, Ցայտարարութեան մէջ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը չի շօշափում, բայց նրա 1-ին կետում՝ «Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գօտում…», 3-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղում շիման գծի երկայնքով…», 6-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղի կապը Չայաստանի հետ…» (միակ միխթարանքը, որտեղ «Լեռնային Ղարաբաղ» եւ «Չայաստան» անուանումները միասին յիշատակուել են) եւ 7-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղի տարածք եւ յարակից շրջաններ» նշուած բառակապկցութիւնները, մեր կարծիքով, վկայում են, որ կողմերը Ցայտարարութեան համաձայնեցման պահին «Լեռնային Ղարաբաղի» տակ նկատի են ունեցել որպէս վարչաքաղաքական եւ յարակից շրջաններից առանձնացուած միաւոր կամ որպէս Նախկին ինքնավար մարզի տարածքով կամ էլ նրա մի մասով առանձնացուած միաւոր։

Բայց հետագայ դեպքերը ցոյց են տալիս, որ Ազրպայեյճանը Լեռնային Ղարաբաղը դիտարկում է որպէս մի սովորական աշխարհագրական տարածք։ Ինչպէս պատերազմից յետոյ, այնպէս էլ հիմա Ազրպայեյճանի Նախագահը պարբերաբար յայտարարում է, որ ինչպէս Լեռային Ղարաբաղի հասկացութիւն կամ հիմնահարց, դա անցեալի գիրկն է գնացել, եւ հայերը պետք է համարկուեն Ազրպեյճանին՝ որպէս այդ պետութեան քաղաքացիներ։ Ըստ երեւոյթին, Ալիեւը ըր քան չի ասում, քանի որ Ազրպայեյճանի մայր օրէնքում Լեռնային Ղարաբաղի մասին որեւէ խօսք չկայ եւ չի էլ կարող լինել, որովհետեւ վերջինս աւելի քան 30 տարի առաջ հրաժեշտ է տուել Ազրպայեյճանին։ Ազրպեյճանի բռնապետը, հաստարքիմ մնալով իր Նախկին հայեացքներին, ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովի 76-րդ խտած շրջանում կոչ արեց անդաւ երկրներից չօգտագործել Լեռնային Ղարաբաղ անունանումը՝ վերստին կրկնելով, որ հակամարտութիւնը մնացել է անցեալում։ Ըստ Ազրպայեյճանի Նախագահի, Պաքուն 30-ամեայ հակամարտութիւնը լուծել է ռազմաքաղաքական միջոցներով, վերականգնել իր տարածքային ամբողջականութիւնը։ «Ազրպեյճանն այլեւս չունի Լեռնային Ղարաբաղ անունով վարչատարածքային միաւոր, ահա՝ Ալիեւի բարբաքանը։ Ինչպէս ասում են՝ արքը եօթ երգ գիտւ, եօթն էլ տանձի մասին։

Լեռնային Ղարաբաղի «յարակից շրջաններ» եզրոյթին առաջին անգամ հանդիպում ենք Պաքւում 1990թ. յունւարի 13-ին հայ բնակչութեան ջարդերի կապակցութեանը ընդունած փաստաթղթում, երբ ԽՍՀՄ Գերագոյն խորհրդի Նախագահութեան 15.01.1990թ. որոշմամբ արտակարգ դրութիւն յայտարարուեց «Ազրպեյճանական ԽՍՀՄ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ու նրա յարակից շրջանների, Չայկական ԽՍՀ Գորիսի շրջանի տարածքում»։ Եթէ Նայենք Նախկին ԼՂԻՄ-ի քարտեզին, ապա պարզ է դառնում, որ Ադդաւի, Ֆիզուլիի, Ջաքարայիկի, Ղուբաթլուի, Լաչինի, Զեյթաքարի, Շահումեանի, Պարտաւի եւ Միր Բաշիրի շրջաններն ինքնավար մարզի տարածքին յարակից են։ Բայց Արցախի Չանրապետութեան արդի աշխարհագրական դիրքը բոլորովին այլ տեսք ունի, քանի որ վերջինս պատերազմը շատ ծանր հետեւանքներ ունեցաւ հայ ժողովրդի համար։

ՀԱԿԱՊԻԹԻՔՆԵՐՈՒ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՅՔԱՐ

Հակապիոթիքները դեղատեսակներ են, որոնք կ'օգտագործուին պաքթերիա (ցպկային մարմիններ) յառաջացած վարակներու բուժման համար: Հակա-պիոթիքները տարիներու ընթացքին փրկած են բազմաթիւ կէսները:

Այս դեղերու չարաշահումն ու անպետք օգտագործումը, սակայն, նպաստած են երեւոյթի մը, որ յայտնի է որպէս «հակապիոթիքներու դիմադրութիւն» (Antibiotic resistance): Այս դիմադրութիւնը կը զարգանայ, երբ վնասակար ու գործուն մանրէներ կը նենգափոխուին (mutate) այնպէս, որ նուազեցնեն կամ չեզոքացնեն հակապիոթիքներու արդիւնաւետութիւնը:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՈՐՈՋՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հակապիոթիքներու նկատմամբ դիմադրութիւնը աճող մտահոգութիւն է ամբողջ աշխարհի մէջ: Երբ մարդը կը վարակուի հակապիոթիքի դիմադրող մանրէով, ոչ միայն այդ հիւանդին բուժումն աւելի դժուար կ'ըլլայ, այլեւ հակապիոթիքի դեմ դիմացկուն մանրէն կրնայ տարածուիլ այլ մարդոց:

Երբ հակապիոթիքները չեն գործեր, հետեւեալները կրնան տեղի ունենալ.

- Աւելի երկար հիւանդութիւններ,
- Աւելի բարդ հիւանդութիւններ,
- Աւելի շատ բժիշկներու այցելութիւններ,
- Աւելի ուժեղ եւ սուղ դեղատեսակներու օգտագործում,
- Մանրեական վարակներով աւելի շատ մահուան պարագաներ:

Հակապիոթիքներու նկատմամբ դիմացկուն դարձած մանրէներու օրինակներ են մաշկի, միզուղիներու, ուռեղատապի (meningitis), սեռական միջոցներով փոխանցուող հիւանդութիւններու եւ շնչուղիներու վարակներ յառաջացնող մանրէները:

Պետական այլ գերատեսչութիւններու հետ համագործակցութեամբ, ՄԱՆԴԱՐՔԵՐԻ եւ դեղերու վարչութիւնը (FDA) խախճեռնած է քանի մը միջոցներ՝ հակապիոթիքներու նկատմամբ դիմադրութիւնը դիմաւայելի համար:

Վարչութիւնը հրապարակած է դեղերու մակնշման կանոնակարգ՝ շեշտը դնելով հակապիոթիքներու խելամիտ ու տրամաբանական օգտագործման վրայ: Կանոնակարգերը կը քաջալերեն առողջապահութեան ոլորտի մասնագետները՝ հակապիոթիքներ դեղագրելու միայն քլինիքական անհրաժեշտութեան պարագային, ինչպէս նաեւ խորհուրդ կու տան հիւանդներուն՝ նման դեղերու ճիշդ օգտագործման եւ անոնց պատուիրածին պէս գործածելու կարեւորութեան մասին:

ՀԱԿԱՊԻԹՈՅՆԵՐԸ ԿԸ ՊԱՅՔԱՐԻՆ ՍԱՆԴԵՆԵՐՈՒ (BACTERIA), ԵՒ ՈՉ ԹԵ ԺԱՅԻՐԵՐՈՒ (VIRUS) ԴԻՄԱՑ

Հակապիոթիքները պէտք է օգտագործուին մանրեական վարակներու դիմաց: Օրինակ, անոնք կ'օգտագործուին սթրեփ լոկորդի բուժման համար, որ կը յառաջանայ **սթրեփթոքոքոս** մանրէէն, կամ՝ **ստաֆիլոքոքային** մանրէներէ յառաջացած մաշկի վարակներու պարագային:

Հակառակ անոր որ հակապիոթիքները կ'ոչնչացընեն մանրէները, սակայն անոնք արդիւնաւետ չեն ժաիրերու դիմաց: Հետեւաբար անոնք արդիւնաւետ չեն ըլլար ժաիրային վարակներու դեմ, ինչպիսիք են՝ մրսածութիւնը (common cold), հազի տեսակներու մեծամասնութիւնը, կոկորդի ցաւերու բազմաթիւ տեսակները եւ կրիփը:

ՀԱԿԱՊԻԹՈՅՆԵՐՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԺԱՅԻՐԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐՈՒ ԴԵՄ

- Չի բուժեր վարակը:
- Ուրիշներու ժաիրով վարակուելէ չի պաշտպաներ:
- Չ'օգնէր մարդուն աւելի լաւ զգալու:
- Կրնայ յառաջացնել անտեղի, անպետք ու վնասակար կողմնակի բարդութիւններ:
- Կրնայ նպաստել **հակապիոթիքակայուն** մանրէներու զարգացման:

Հիւանդները եւ բուժաշխատողները կրնան կարելորդ դեր խաղալ հակապիոթիքներու դիմացկունութեան դեմ պայքարին մէջ: Հիւանդները պէտք չէ հակապիոթիքներ պահանջեն, երբ առողջապահութեան մասնագետը ըսէ, որ դեղերը անհրաժեշտ չեն: Առողջապահութեան ոլորտի մասնագետները պէտք է հակապիոթիքներ դեղագրեն միայն այլ վարակներուն, որոնք, իրենց կարծիքով, յառաջացած են մանրէներէ:

Որպէս հիւանդ՝ ձեր լաւագոյն մօտեցումը հարցընելն է ձեր բուժաշխատողին, թէ արդե՞ծ հակապիոթիքը արդիւնաւետ կ'ըլլայ ձեր պարագային: Նաեւ հարցուցէք, թէ ի՞նչ կրնաք ընել ձեր ախտանիշները թերթեցնելու համար:

Այսպիսով, ինչպէ՞ս կարելի է գիտնալ, թէ ձեր ունեցած ժաիրային կամ մանրեական վարակ է:


Դեղերու գնահատման եւ հետազօտութիւններու կեդրոնի բժշկական պատասխանատու ժողեֆ Թըրները կ'ըսէ, որ մրսածութեան կամ կրիփի ախտանիշները (ժաիրային վարակ) կը նուազին մէկ շաբթուան ընթացքին: Բայց եթէ ունենաք տաքութիւն եւ այլ ախտանիշներ, որոնք կը տեսն ու կը վատթարանան օրերու ընթացքին, կրնայ ձեր ունեցածը պաքթերիական վարակ ըլլալ եւ այս պարագային պէտք է խորհրդակցիք ձեր բուժաշխատողին հետ:

ՀԵՏԵՐԵՑԷԸ ԾԻՇՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՅԱՆԱԳՆԵՐՈՒՆ

Երբ ձեզի հակապիոթիք դեղագրեն պաքթերիական վարակ բուժելու համար, կարելորդ է դեղը առնել ճիշդ այնպէս, ինչպէս նշուած է: Ահա՝ հակապիոթիքներու ճիշդ օգտագործումը խթանելու կարգ մը խորհուրդներ.

●**Հակապիոթիքները առնել սահմանուածին պէս.** Կարելորդ է դեղորայքը առնել ձեր բժիշկի նշանակածին համաձայն, նոյնիսկ եթէ ընթացքին դուք ձեզի աւելի լաւ զգաք: Եթէ բուժումը շատ շուտ դադրեցուի, եւ դուք կրկին հիւանդանաք, մնացած պաքթերիաները կրնան դիմացկուն դառնալ ձեր ընդունած հակապիոթիքին նկատմամբ:

●**Սի՛ շրջանցէք չափաբաժինները (doses).** Հակապիոթիքները առաւել արդիւնաւետ են, երբ անոնք կ'առնուին սահմանուած կարգով:



●**Սի՛ խնայէք հակապիոթիքները.** Կրնաք մտածել, որ կարելի է հակապիոթիքը պահել յաջորդ անգամ, երբ հիւանդանաք, բայց հակապիոթիքը նախատեսւած է ճիշդ ձե՛ր վարակին համար: Երբեք մի՛ ընդունիք այս դեղերու մնացորդացը: Միայլ դեղամիջոց ընդունիլը կրնայ ուշացնել բուժումը եւ ձեր առողջական վիճակը վատթարացնել:

●**Սի՛ առնէք ուրիշի համար նախատեսուած հակապիոթիքներ.** Անոնք կրնան համապատասխան չըլլալ ձեր հիւանդութեան, կրնան ուշացնել բուժումը եւ ձեր առողջական վիճակը վատթարացնել:

●**Խօսեցէք** ձեր առողջապահութեան մատակարարի հետ. Հարցուցէք, որպէսզի կողմնորոշուիք:

●**Բոլոր դեղերը ունին կողմնակի ազդեցութիւններ.** Տեղեկացուցէք ձեր առողջապահութեան մասնագետը, եթէ նոր կամ անսովոր ախտանիշներ կամ կողմնակի ազդեցութիւններ ունենաք: Թերեւս անհաճոյ կողմնակի ազդեցութիւն ունեցող հակապիոթիքի դադրեցումը անհրաժեշտ ըլլայ:

Ի՞նչ կ'ընէ FDA-ը

FDA-ը հակապիոթիքներու դիմադրութեան դեմ կը պայքարի հետեւեալ ձեւերով.

●**Որոշակի նոր հակապիոթիքներու հաստատում.** 2015 թուականէն FDA-ը հաստատած է նոր հակապիոթիքներ, որոնք կրնան բուժել որոշակի դիմացկուն պաքթերիաներ: Առողջապահութեան մասնագետներուն խորհուրդ կը տրուի օգտագործելու նոր հակապիոթիքները պատշաճ կերպով, իսկ որոշ հակապիոթիքներու պարագային, օգտագործել զանոնք միայն այն հիւանդներու մօտ, որոնք ունին բուժման սահմանափակ տարբերակներ:

●**Պիտակաւորման (labeling) կանոնակարգեր, որոնք կը վերաբերին հակապիոթիքներու պատշաճ օգտագործման.** Հակապիոթիքներու պիտակաւորումը բազմաթիւ շրջաններու մէջ կը պարունակէ թելադրանքներ, որոնք խորհուրդ կու տան բուժաշխատողներուն, որ այս դեղերը պէտք է օգտագործուին միայն այն վարակներու բուժման համար, որոնք ենթադրաբար կը յառաջանան պաքթերիաներէ: Պիտակաւորումը նաեւ կը խրախուսէ բուժաշխատողները խորհուրդ տալու հիւանդներուն՝ դեղերու պատշաճ օգտագործման համար:

●**Համագործակցութիւն՝ հանրային իրազեկուածութիւնը խթանելու համար.** FDA-ը կը համագործակցի Հիւանդութիւններու վերահսկման եւ կանխարգիւման կեդրոններուն հետ (CDC) «Դարձէ խելացի. գիտցէ՛ք՝ հակապիոթիքները ե՛րբ կը գործեն» քարոզարշաւով, որ կ'առաջարկէ կայքէջեր, տեղեկատուական թերթիկներ եւ այլ տեղեկատուական աղբիւրներ, որոնք միտուած են հանրութիւնը լուսաբանելու՝ հակապիոթիքներու դիմացկուն վարակները կանխարգիւելու համար:

●**Խրախուսել նոր հակապիոթիքներու մշակումը.** FDA-ը արդիւնաբերութեան համար մշակած է ուղեցոյցներ այն քլինիքական ուսումնասիրութիւններու տեսակներուն վերաբերեալ, որոնք կրնան իրականացուի՝ գնահատելու, թէ ինչպէ՛ս հակապիոթիքները կ'աշխատին տարբեր տեսակի վարակներու բուժման համար: FDA-ը կազմակերպած է սեմինարներ եւ մասնակցած է անոնց: Այդ սեմինարներուն նպատակը եղած է մշակումը նոր հակապիոթիքներու, որոնք պիտի բուժեն դիմացկուն պաքթերիաներու վարակները:

Աղբիւր՝ FDA

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԶԲՕՍԱՎԱՅԻՐԵՐՈՒ ԴԵՂԵՐ

Ի՞նչ են գիշերային զբօսավայրերու դեղերը (Club drugs):

Գիշերային զբօսավայրերու դեղերը հոգեգործուն (psychoactive) դեղերու խումբ մըն են: Անոնք կեդրոնական ջղային համակարգի (CNS) վրայ կը գործեն եւ կրնան յառաջացնել տրամադրութեան, գիտակցութեան եւ վարքի փոփոխութիւններ: Այս դեղերը աւելի յաճախ կ'օգտագործուին երիտասարդներու կողմէ՝ գինետուններու եւ գիշերային զբօսավայրերու մէջ ու համերգներու կամ երեկոյթներու ժամանակ: Գիշերային զբօսավայրերու դեղերը, ինչպէս դեղերուն մեծ մասը, ունին ծածկանուներ, որոնք ժամանակի ընթացքին կը փոխուին կամ կը տարբերին երկրի տարբեր շրջաններուն մէջ:

Որո՞նք են գիշերային զբօսավայրերու դեղերու տարբեր տեսակները:

Գիշերային զբօսավայրերու դեղերու տեսակներն են. MDMA (Methylenedioxymethamphetamine), որ նաեւ կը կոչուի Ecstasy եւ Molly: GHB (Gamma-hydroxybutyrate), որ նաեւ յայտնի է որպէս G եւ Liquid Ecstasy : Ketamine, որ նաեւ յայտնի է որպէս Special K եւ K: Rohypnol, որ նաեւ յայտնի է որպէս Roofies: Methamphetamine, որ նաեւ յայտնի է որպէս Speed, Ice եւ Meth: LSD (Lysergic Acid Diethylamide), որ նաեւ յայտնի է որպէս Acid: Այս ցանկէն կարգ մը դեղեր հաստատուած են որոշակի բժշկական օգտագործման համար: Այս դեղերու այլ կիրարկումները սխալ օգտագործում են:

Որո՞նք են ժամադրութեան բռնաբարութեան դեղերը (date rape drugs):





քան դեղ կայ ձեր մարմնին մէջ եւ արդեօք դեղը խառնուած է այլ դեղերու կամ ալքոլի հետ: Ալքոլը կրնայ ա՛լ աւելի զօրացնել թմրանիւթերու ազդեցութիւնը եւ կրնայ լուրջ առողջապահական խնդիրներ յառաջացնել եւ նոյնիսկ՝ մահ:

Կա՞ն քայլեր, որոնց կրնամ դիմել, որպէսզի պաշտպանուիմ այս տեսակի դեղերէն:

Այո՛, ահա՝ անոնցմէ քանի մը հատը.- Զձգել ձեր խմիչքը՝ առանց հսկողութեան: Մի՛ ընդունիք խմիչքներ՝ այլ մարդոցմէ: Եթէ պահածոյէ կամ շիշէ կը խմէք, դո՛ւք բացէք ձեր խմիչքը: Նուազանքիւն դարձուցէ ձեր ընկիւններուն եւ խնդրեցէ, որ իրենք ալ ուշադրութիւն դարձնեն ձեզի:

Աղբիւր՝ «ՄԵՏԼԱՅՆ ՓԼԱՍՍ»

Պատրաստեց՝ ԶԻՐՍ ՆՐՈՅՆԱՆ



շատ դեղ կայ, դուք հաւանաբար աւելի շատ անոր կողմնակի վատ ազդեցութիւնները (side effects) ունենաք»:

Օրինակ, եթէ դուք քոլեսթրոլը նուազեցնելու համար **սթաթինային** որոշ դեղեր առնող էք, եւ պատահի, որ շրջան մը կրիֆոնի հիւթ խմէք, դեղը չափէն աւելի կրնայ մնալ ձեր մարմնին մէջ՝ մեծցնելով լեարդի եւ մկաններու վնասման վտանգը, որ կրնայ յանգիլ երիկամներու անկման (kidney failure):

Շատ դեղամիջոցներ կը քայքայուին (կը նիւթափոխանակուին) (metabolize) բարակ աղիքներուն մէջ՝ CYP3A4 կոչուող կենսական էնզայմի օգնութեամբ: Կրիֆոնի հիւթը կրնայ արգելափակել աղիքային CYP3A4-ի գործողութիւնը, ուստի նիւթափոխանակութեան փո-



խարեն՝ դեղատեսակին մեծ մասը կը ներթափանցէ արին եւ աւելի երկար կը մնայ մարմնին մէջ: Արդիւնքը՝ չափէն աւելի դեղատեսակ ձեր մարմնին մէջ:

Աղիքներուն մէջ CYP3A4 **էնզայմին** քանակութիւնը կը տարբերի մարդոց միջեւ: Որոշ մարդիկ ունին այս **էնզայմէն** մեծ քանակութեամբ, ուրիշները՝ քիչ: Այսպիսով, կրիֆոնի հիւթը կրնայ տարբեր ձեւով ազդել մարդոց վրայ, նոյնիսկ երբ անոնք կ'առնեն նոյն դեղատեսակը, նոյն քանակութեամբ:

Թէեւ գիտնականները քանի մը տասնամեակ է գիտեն, որ կրիֆոնի հիւթը կրնայ մարմնին մէջ որոշակի դեղատեսակներու չափազանց մեծ քանակութիւն յառաջացնել, սակայն վերջին ուսումնասիրութիւնները պարզած են, որ հիւթը հակառակ ազդեցութիւն ունի քանի մը այլ դեղամիջոցներու վրայ:

«Կրիֆոնի հիւթը կրնայ յանգիլ **ֆեքսոֆենատինի** (fexofenadine) աւելի քիչ արեան ներթափանցման». Հիւթը կը նուազեցնէ դեղամիջոցներու արդիւնաւետութիւնը, կ'ըսէ Հունակ: **Ֆեքսոֆենատինը** (ապրաւքանիշը՝ Allegra) հասանելի է դեղագիրքով եւ առանց անոր՝ եղանակային գերզգայնութեան ախտանիշները թերթեցնելու համար: **Ֆեքսոֆենատինը** նոյնպէս կրնայ լաւ չաշխատիլ, եթէ առնուի **նարինջի** կամ

Աղբիւր՝ FDA

Շար.ը՝ էջ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐՈՒ
ԸՄԲԸԱՄԱՐՏԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ՝
ՈՍԿԻԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ



Իրանի մայրաքաղաք Թեհրանի մէջ տեղի ունեցող աշխարհի բանակայիններու ըմբշամարտի ախոյեանութեան, ազատ ոճի ըմբշամարտի մրցումներուն, ախոյեանի կոչման արժանացաւ Յայաստանի հաւաքականի անդամ, 70 քկ դասակարգին մասնակցող՝ Արման Անդրեասեան, այս մասին յայտնեց Յայաստանի ըմբշամարտի ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը։

Միեր Մարկոսեան, Յայաստանի համար ապահովեց արծաթ մետալ մը՝ 86 քկ դասակարգին մէջ։

Իսկ պրոնզէ մետալակիր դարձան Մանուէլ Կնձըրցեան (57 քկ), Մենուա Եարիբեկեան (74 քկ) եւ Յարութիւն Մանուկեան (61 քկ)։

Նշենք, որ այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն 22 երկիրներէ զինուորական ծառայութիւն կատարող մարզիկներ։

ՀՅԴ ԼԻԲԵՐԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ...
Շարունակուած Ա. Էջէն

ամրապնդել եւ միջազգային ու շրջանային տագնապներու լուծման մէջ զինուորական յարձակումներու դէմ յաղթանակ արձանագրել՝ հիմնուելով գործնական որոշումի կայացման վրայ՝ փոխան անտարբեր քաղաքականութիւններու, որոնք միայն կը վատթարացնեն տագնապները՝ զանոնք վերածելով միջազգային ընտանիքին զլխուն վրայ կախուած Դամոկլեան սուրի»։

«ՀՀԴ Լիբանանի Հայ դատի մարմինը միշտ ջատագովը եղած է միջազգային քաղաքականութիւններու, որոնց նպատակը ազգամիջեան տագնապները ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի հիմամբ լուծելն է՝ հիմնուելով անոնց պատմական, ազգային, տնտեսական ու ժողովրդագրական իրաւունքներու վրայ, եւ կը մաղթենք ու կը հաւատանք, որ Միացեալ Նահանգներու ներկայ վարչակազմը պիտի որդեգրէ անհրաժեշտ քաջարի քայլերը՝ վերջ տալու համար Ազդպէճեանի եւ անոր հովանաւոր Թուրքիոյ Յայաստանի ու Արցախի հանրապետութիւններուն եւ անոնց խաղաղաբէր բնիկ ժողովուրդին վրայ շարունակուող յարձակումներուն, ինչպէս նաեւ ամրապնդելու հայ ազգի աւելի լայն ու համապարփակ իրաւունքները՝ նախագահ Ուիլսոնի սկզբունքներն ու գործունեութիւնը ունենալով իբրեւ միջազգային դիւանագիտութեան լաւապէս փաստուած ուղեցոյց, եզրափակեց Հայ դատի մարմինը։

ՀԱՏ ԻՊՐԱՅԻՄ. «ԹՈՒՐԵԻՈՅ ...»
Շարունակուած Ա. Էջէն

Սաղաթէյեան անդրադարձաւ շրջանին մէջ Թուրքիոյ ապակայունացնող դերակատարութեան եւ շրջանի երկիրներու տարածքային ամբողջականութեան դէմ այդ պետութեան ոտնձգութիւններու անթոյլատրելիութեան։ Այս ծիրին մէջ ան կարեւոր նկատեց միջազգային խորհրդարանական հարթակներու վրայ Յայաստանի եւ Սուրիոյ համագործակցութիւնը։

Դեսպան Սոհամետ Հատ Իպրահիմ իր կարգին դիտել տուաւ, թէ Թուրքիոյ քայլերը ամբողջութեամբ դէմ ու հակասող են շրջանի կայունութեան։ Ան մերժելի նկատեց այդ երկրին կողմէ վարձկաններու ու ահաբեկիչներու ներգրաւումը պատերազմական գործողութիւններուն մէջ, ինչպէս տեղի ունեցաւ 44-օրեայ պատերազմին։

Կողմերը կարելոյ ունեցնել երկկողմանի բարեկամական ու եղբայրական յարաբերութիւններու խորացումն ու ընդլայնումը՝ ընդգծելով, որ պատմականօրէն առանձնայատուկ է երկու երկիրներու փոխադարձ գործակցութիւնը։ Խորհրդարանական դիւանագիտութեան զարգացման շրջագիծին մէջ զրուցակիցները հաստատեցին փոխադարձ այցելութիւններու գործուն դերն ու նշանակութիւնը։ Անդրադարձ կատարուեցաւ տնտեսական յարաբերութիւններու խորացման վերաբերող քայլերու իրականացման, մասնաւորապէս՝ արտաձման եւ ներածման ծաւալներու աւելնալուն։ Ընդգծուեցաւ սուրիահայերուն զգալի դերակատարութիւնը երկրի հասարակական-քաղաքական կեանքին մէջ։

Իշխան Սաղաթէյեան պատրաստակամութիւն յայտնեց՝ երկկողմանի յարաբերութիւններու խթանման ծառայող նախաձեռնութիւններու կեանքի կոչման օժանդակելու։

**ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԱՅՔԷՉԸ**

www.bourjhammoud.gov.lb

ՃԱՏՐԱԿ. «ԹԱԹԱ ՍԹԻԼ ԻՆՏԻՎ»-Ի ՄՐՅԱՇԱՐՔ

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆ ՏԻՐԱՅԱՒ ՏԻՏԴՈՍԻՆ

Նախորդ շաբաթավերջին հոնկանկան Կակաթա քաղաքին մէջ իր աւարտին հասաւ արագ ճատրակի «Թաթա Սթիլ Ինտիւ»-ի միջազգային մրցաշարքը՝ հայրենի կրանտմասթըր Լեւոն Արոնեանի տիտղոսին տիրացումով։

18 հանգրուանի արդիւնքները նկատի առնելով՝ Յայաստանի ներկայացուցիչը եւ հնդիկ Արճուն Երիկայսի կիսեցին առաջին դիրքը՝ 11,5-ական կէտով։

Թայ պրիւքի երկու մրցումներն ալ աւարտեցան հաւասարութեամբ, եւ պայքարը շարունակուեցաւ Արմակետոնով, որուն ընթացքին Արոնեան ճերմակ քարերով յաղթանակ արձանագրեց։



ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԸ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ...
Շարունակուած Ա. Էջէն



պահանջը Նիկոլ Փաշինեանին՝ զադունագործել յառաջիկային ստորագրուելիք փաստաթուղթը։

«Ազգային ժողովը ընտրուած է ժողովուրդին կողմէ, ոչ թէ կառավարութեան, ոչ թէ Նիկոլ Փաշինեանին, ուստի կը խնդրենք մեր պահանջին ընթան պատգամաւորներ Արթուր Խաչատրեանը, Արծուիկ Մինասեանը, Ասարամ Կրպէեանը եւ «Պատիւ ունենա՛» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Մամիջանեանը դիմաւորեցին Փաշինեանի պահանջներ ներկայացնող քաղաքացիները։



թացք տալ՝ վերջնորդինք ունենալով այդ փաստաթուղթի բացայայտումը, որպէսզի ժողովուրդը անակնկալի չգայ եւ անհրաժեշտութեան պարագային կարենայ կանխել որեւէ անսպաստ գործընթաց», ըսաւ Երեւանի պետական համալսարանի դասախօս Մենուա Սողոմոնեանը՝ «Հայաստան» դաշինքի պատգամաւոր Արծուիկ Մինասեանին յանձնելով դիմումը։

Արծուիկ Մինասեան ըսաւ՝ մեզ նկատի առեք ձեզմէ մէկը՝ ընդդիմութեան լիազօրագիրները, իրաւագիրները ձերն են։

Մինչ այդ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ Արթուր Խաչատրեան, Արծուիկ Մինասեանը, Ասարամ Կրպէեանը եւ «Պատիւ ունենա՛» խմբակցութեան պատգամաւոր Հայկ Մամիջանեանը դիմաւորեցին Փաշինեանի պահանջներ ներկայացնող քաղաքացիները։

ՆԱՅՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ
Radio Voice of Van - Վանայ Զայն FM: 94.7 ԷՆ 95 MHz

7.00 Զայլերգներ / Բարի լոյս	4:00 Գրական անդաստան (Բաբգէն Սիմոնեանի «Պատկերներ Լիբանանից» գիրքը)
7.15 Սփիւռեան հանդարտ երգեր	4.50 Խանդավառ երգեր
7.30 Բարեւ	5.00 «Վանայ Զայն»-ը երեկոյեան
8.30 Լուրեր	5.05 Ունկնդրութեան վայելքը (Գարմէն Աճեմեանի հետ)
9.00 Բարեւ. հիւր՝ Շադիկ Կոկոնեան-Չամիչեան (Լիւթ)՝ մասնակապարտեզի աշակերտներու դժուարութիւնները	5.30 Նոր երգեր
9.30 Սփիւռեան երգեր	6.30 Լուրեր
10.30 Հայկական աշխարհի լուրեր (ուղիով՝ դիմատեստորով)	6.50 Հայրենի խանդավառ երգեր
10.45 Խանդավառ երգեր	8.00 Օրուան երգիչ (Աթո Սարգսեան)
11.30 Արդի մշակութիւն ժողովրդային երգեր	8.30 Radio Jazz
12.00 Նոր երգեր	9.30 Հայկական աշխարհի լուրեր (կրկ.)
1.10 Ազգային-հայրենասիրական երգեր	9.45 Ետդրամային երգեր
1.30 Լուրեր	11.00 Աշուղական երգեր
2.00 Յիշատակելիները (Արցախեան նորօրեայ հերոսներ)	12.00 Յիշատակելիները/Յեղափոխական երգեր
2.05 Յեղափոխական երգեր	2.00 Յեղինակային երգեր
3.00 Զըլ եոմ պիոյմու. (ուղիով դիմատեստորով)	3.00 Կրկնութիւններ
	4.30 Հայերէն այլազան երգեր
	6.00 Հայկական երաժշտութիւն

«Վանայ Զայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժնին մէջ (voiceofvan.net):

ՃԱՏՐԱԿ. ԵՒՐՈՊԱՅԻ
ԽՄԲԱՅԻՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂՈՑ
ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՅԱՒ
7-ՐԴ



Նախորդ շաբաթավերջին Սլովենիոյ մէջ իր աւարտին հասաւ Եւրոպայի ճատրակի խմբային ախոյեանութիւնը, երբ տեղի ունեցան տղոց եւ աղջկանց 9-րդ եւ վերջին հանգրուանի ճակատումները։

Հայաստանի տղոց հաւաքականը, որ վերջին հանգրուանին 3-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Ուքրանիայէն, 12 կէտով գրաւեց 7-րդ դիրքը։

Եւրոպայի ախոյեան հռչակուեցաւ Ուքրանիա, որ ապահովեց 14 կէտ։

Ֆրանսա, որ վերջին հանգրուանին յաղթեց Ազըրպէյճանին եւ ունեցաւ լոյսեան կէտ, լրացուցիչ ցուցանիշով գրաւեց երկրորդ դիրքը։

Իսկ Լեհաստան ամբողջացուց լաւագոյն եռեակը՝ 13 կէտով։

Ինչ կը վերաբերի Հայաստանի աղջկանց հաւաքականին, որ վերջին հանգրուանին յաղթեց Չեխիոյ, 10 կէտով գրաւեց 11-րդ դիրքը։

Ախոյեանութեան տիտղոսը նախաւերջին հանգրուանին ապահոված էր Ռուսիա, մինչ փոխախոյեան հանդիսացաւ Վրաստան։

ԱՂՊԻՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԱԿ ԲԱՅԻՆ...
Շարունակուած Ա. Էջէն

մաջափի հրաձգային զինատեսակներէ կրակ բացին հայ-ազդպէճեանական սահմանի, մասնաւորապէս՝ Գեղարքունիքի մարզի Նորաքալ գիւղի հատուածին մէջ տեղակայուած հայկական դիրքերուն ուղղութեամբ։ Այդ պատճառով ծանրօրէն վիրաւորուեցաւ եւ հիւանդանոցի ճամբուն վրայ մահացաւ ժամկետային զինուոր, շարքային Սուրէն Սաֆաբեանը (2002-ի ծնունդ)։

Ըստ նախարարութեան, երեկոյեան ժամը 7:30-ի դրութեամբ փոխհրաձգութիւնը դադրեցաւ։

«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ
ՃԱՄԱՏԱԳՐԱԿԱՆ ...»
Շարունակուած Ա. Էջէն

աչքի են ընկել առանձնայատուկ ջերմութեամբ եւ փոխադարձ վստահութեամբ։ Մեզ յաջողուել է համատեղ ջանքերով ապահովել քաղաքական երկխօսութեան բարձր մակարդակ, ծաւալել փոխշահաւետ գործակցութիւն միջազգային ատենաներում, զարգացնել մշակութային, կրթական եւ գիտական շփումները։

Մեր ժողովուրդները ճակատագրական պահերին սատարել են միմեանց, կիսել վիշտն ու ուրախութիւնը, պայքարել են այսօր էլ միասնաբար պայքարում են յանուն արդարութեան, համամարդկային իրաւունքների եւ արժեքների վերականգնման ու պահպանման։

Հայաստանը բարձր է գնահատում Լիբանանի եղբայրական վերաբերմունքը լիբանանահայութեան հանդէպ։ Որպէս Լիբանանի նուիրեալ քաղաքացիներ՝ հայ համակից ներկայացուցիչները լիարժեք դերակատարութիւն ունեն երկրի քաղաքական, տնտեսական, ընկերային, մշակութային, կրթական ու մարզական ոլորտներում եւ իրենց գործունեութեամբ զգալիօրէն նպաստել են շարունակելու եւ նպաստել Լիբանանի զարգացմանը եւ յառաջընթացին։

Մեր երկրների յարաբերութիւններում առկայ է մեծ ներուժ, որի նպատակային օգտագործումը կը խթանի փոխշահաւետ համագործակցութիւնը։

Վստահ եմ, որ միասնական ջանքերով կ'ընդլայնենք եւ կ'ամրապնդենք երկկողմ գործակցութիւնը՝ ի նպաստ մեր ժողովուրդների բարօրութեան։

Մաղթում եմ ձեզ ամենայն բարիք եւ յաջողութիւններ Լիբանանի առջեւ ծառացած մարտահրաւերները յաղթահարելու գործում, իսկ Լիբանանի բարեկամ ժողովուրդին՝ յարատեւ խաղաղութիւն եւ բարեկեցութիւն։

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆ ԸՆԴՈՒՆԱԾ Է...
Շարունակուած Ա. Էջէն

Սաղաթէյեան ներկայացուցած է Հայաստանի եւ Արցախի մէջ տիրող քաղաքական-անվտանգային իրավիճակը եւ անոր վերաբերեալ Դաշնակցութեան եւ Հայաստանի ընդդիմադիր դաշտին մէջ ձեւաւորուած դիրքորոշումը։ Հանդիպումին խօսուած է նաեւ Լիբանանի քաղաքական-տնտեսական ճգնաժամային իրավիճակին եւ այդ ծիրին մէջ հայ համայնքի դիմագրաւած դժուարութիւններուն մասին։

Կողմերը քննարկած են երկուստեք մտահոգող հարցեր, ինչպէս նաեւ խորհրդարանական մակարդակի վրայ Հայաստան-Լիբանան բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման գործին մէջ ջանքերու աւելի արդիւնաւետ գործադրման կարելութիւնն ու կարելիութիւնները։

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽՎԱՐԶԱՊԵՏԻ
ՅԵՏ ՀԱՆՐԱՊԵՏԻ ԸՆԹԱՅԵԻՆԱՊՏՈՐԱԿԵԱՆ. «ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԱՆՓՈՓՈԽԵԼԻ ԵՆ»

Իրանի արտաքին գործոց նախարար Զիսեյն Ամիր Ապտոլլահեան յայտնած է իր երկրին պատրաստակամությունը՝ մասնակցելու Ազրայեյանի կողմէ բռնագրավուած տարածքներու վերականգնման հոլովոյթին:

Իրանեան «Թասսիմ» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ իրանեան դիւանագիտութեան պետը կիրակի օր հանդիպում ունեցած է Ազրայեյանի փոխվարչապետ, տնտեսական համագործակցութեան միացեալ յանձնախումբի նախագահ Շահին Մուսթաֆայեւի հետ, որ միօրեայ այցելութեամբ մեկնած էր Թեհրան:

Երկու պաշտօնեաները քննարկած են կովկասեան շրջանի վերջին զարգացումները եւ Թեհրանի ու Պաքուի երկկողմանի համագործակցութիւնը:

Գոհունակութիւն յայտնելով երկու ժողովուրդներուն միջեւ առեւտրական յարաբերութիւններու եւ խոր կապերու աճի միտումին նկատմամբ՝ Ապտոլլահեան «Ազրայեյանի տարածքներու ազատագրումը» երկու երկիրներու տնտեսական յարաբերութիւններուն մէջ նոր էջի սկիզբ կոչած է եւ ընդգծած, որ երկու կողմերը պետք է տնտեսական յարաբերութիւններուն մէջ բոլոր կարողութիւնները օգտագործեն առեւտուրի, փոխադրամիջոցի, ուժանիւթի եւ զբօսաշրջութեան ոլորտներուն մէջ:

Իրանցի բարձրաստիճան դիւանագետը անդրադարձած է Իրանի կարելիութիւններուն եւ յայտարարած, որ իրանեան ընկերութիւնները պատրաստ են մասնակցելու նոր «ազատագրուած տարածքներու» վերականգնման: Այս մասին հաղորդած է Իրանի արտաքին գործոց նախարարութեան կայքը:

Իրանեան դիւանագիտութեան պետը վերահաստատած է երկիրներու տարածքային ամբողջականութեան աջակցելու Իրանի մնայուն քաղաքականութիւնը՝ ընդգծելով, որ միջազգային սահմանները անփոփոխելի են:

Ազրայեյանի փոխվարչապետը, իր կարգին, գոհունակութիւն յայտնած է Իրանի քարիւղի, ինչպէս նաեւ ճամբաներու եւ քաղաքաշինութեան նախարարներուն հետ իր կառուցողական հանդիպումներէն՝ ըսելով, որ երկու երկիրները մօտ են քարիւղի եւ կազի ոլորտներուն մէջ պատմական համաձայնագիրներու ստորագրութեան:

«ՃՐՋԱՆԻՆ ՄԵՋ ՆՈՐ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐ
ՍՏԵՂՈՒԱԾ ԵՆ ՀԱՅ-ԱԶՐԱՅԻՆԱԿԱՆ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»
Կ'ԸՍԵ ՊԱՔՈՒ ՄԵՋ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԴԵՄՊԱՆԸ

Պաքուի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ըրի Լիթթընպըրկը յայտարարած է, որ շրջանին մէջ Նոր կարելիութիւններ ստեղծուած են Երեւանի եւ Պաքուի միջեւ կապերը կարգաւորելու, յարաբերութիւնները վերականգնելու համար: «Սփութիք Արմենիա» կը նշէ, թէ ազդու պէճանակաւ լրատուամիջոցները կը հաղորդեն, որ ան այդ մասին ըսած է մամուլի ասուլիսի ընթացքին:



Միջեւ տեղի ունեցալիք հանդիպումը, ըսած է. «Շատ ուրախ եմ լսելով նման հանդիպման մասին»:

«Միացեալ Նահանգներ կ'աջակցին Հայաստանի եւ Ազրայեյանի հաղորդակցութիւններուն, որոնք ուղղուած են երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու կարգաւորման», յայտարարած է դեսպանը:

Անոր համաձայն, Ուաշինկթըն նաեւ կ'ողջունէ Հայաստանի եւ Ազրայեյանի միջեւ պաշտպանութեան նախարարութիւններու ուղիղ կապի ստեղծման որոշումը: Ամերիկեան կողմը յոյս ունի, որ Ազրայեյանի եւ Հայաստանի ղեկավարներու նախատեսուած հանդիպումը լուծման հարցին մէջ քայլ մը պիտի ըլլայ:

«Թերթ» իր կարգին կը հաղորդէ, որ դեսպանը, մեկնաբանելով Հայաստանի եւ Ազրայեյանի ղեկավարներուն

«Անցեալ տարուան տագնապին սկիզբէն ի վեր Միացեալ Նահանգներ մեծ ջանքեր գործադրած է կողմերուն միջեւ անմիջական հաղորդակցութեան կարելիութիւն ստեղծելու համար: Ասիկա կրնայ լաւ արդիւնքներ տալ: Եթէ նայինք անցեալին, ապա պիտի տեսնենք, որ կողմերու, յատկապէս ղեկավարներու անմիջական հաղորդակցութիւնները զգալի արդիւնքներ տուած են: Զեմ գիտեր, թէ ինչ արդիւնքներ պիտի տայ այս հանդիպումը, սակայն լիայոյս եմ, որ ատիկա կարելուր քայլ է յարաբերութիւններու զարգացման եւ լուծման ճամբուն վրայ վստահութեան ձեւաւորման եւ յարաբերութիւններու հաստատման համար», ըսած է ամերիկացի դեսպանը:

ԹՈՒՐԵՒՈՅ ՄԵՋ ԿՈՉ Կ'ՈՒՂԴԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԵՈՅ Ս. ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ

Ներկայիս Թուրքիոյ Հանրապետութեան սահմաններուն մէջ գտնուող հայկական Մշոյ Ս. Առաքելոց վանքը այցելած շարք մը քաղաքացիներ, որոնք շարքին նաեւ եղած է «1071 Ալփարսլան» միութեան նախագահ Թուրգայ Եօզլին, տեղւոյն իշխանութիւններուն կողմէ ուղղած են՝ վերականգնելու կիսաւեր վանքը:

Այս մասին կը հաղորդէ «Ակունք»-ը՝ հիմնուելով թրքական «Անատոլու» լրատու գործակալութեան հրապարակումին վրայ:

Արքիւրին համաձայն, թուրք քաղաքացիները շրջած են գանձագողներու կողմէ աւերուած հայկական եկեղեցիին մէջ եւ ցանկութիւն յայտնած, որ պատմական յուշարձանը վերանորոգուի՝ տուեալ շրջանին մէջ զբօսաշրջութիւնը զարգացնելու նկատառումով:

«1071 Ալփարսլան» միութեան նախագահը գործակալութեան թղթակիցին հետ զրոյցի ընթացքին նշած է. «Իբրեւ քաղաքացիական հասարակական կազմակերպութիւն՝ առիթ ունեցանք այցելելու այս վայրը, ուր ուսումնասիրութիւններ կատարեցինք: Եկեղեցին Ներկայիս աւերակ վիճակի մէջ է, որուն հիմնական պատճառը գանձ որոնողներու եւ անգիտակից մարդոց վերաբերմունքն է: Կը

խնդրենք, որ նմանատիպ տեսարժան վայրերը վերանորոգուին՝ զբօսաշրջութեան զարգացման զարկ տալու համար»:

Թրքական պետական գործակալութիւնը, բնականաբար, չի նշեր վանքին հայկական ըլլալու փաստը:

Ինչպէս յայտնի է, Մշոյ Ս. Առաքելոց վանքը, որ Ներկայիս կը գտնուի Մուշ նահանգի Կեղոնիին ենթակայ Զեփենք (Արաք) գիւղին մէջ, հիմնուած է 4-րդ դարուն Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ: Մշոյ Ս. Առաքելոցը նախքան Հայոց ցեղասպանութիւնը տուեալ շրջանի ամենէն նշանաւոր սրբավայրերէն մէկն էր:

Վանքը 1960 թուականին ուժանակով պայթեցուած է Մշոյ նահանգապետարանին կողմէ, այդ պատճառով ալ այս վանական համալիրէն մեր օրեր հասած են միայն 2 եկեղեցի: Վանքը վերանորոգուած է 1125 թուականին: Վանքի արեւելեան կողմին մէջ 9 խաչքարեր կային: Հայոց ցեղասպանութեան ժամանակ թուրքերը յարձակած են վանքին վրայ եւ սպաննած եկեղեցւոյ վերջին սպասաւոր Յովհաննէս վրդ. Մուրատեանը:

«ՈՐՈՇԱԾ ԵՆՔ ՄՆԱԸ ՈՒ ...

Շարունակուած Ա. Էջեն

Հանդիպումին ՅՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինի Ներկայացուցիչ Իշխան Սաղաթէեանը հաստատեց հայրենադարձներու հետ շարունակական հանդիպումներու կարելիութիւնը: Ան նաեւ յայտնեց ՅՅԴ Հայաստանի կառույցի եւ Հայաստանի Ազգային ժողովի ՅՅԴ պատգամաւորներու պատրաստակամութիւնը՝ կարելի բոլոր միջոցներով աջակցելու հայրենադարձներուն առջեւ ծառայած խնդիրներուն լուծման:

Երեսփոխան Յակոբ Բագրատունի նախ եւ առաջ ընդգծեց ՅՅԴ աշխարհասփիւռ կառույցներուն միջեւ համագործակցութիւնը՝ ի խնդիր թէ՛ համայնքներու, թէ՛ հայրենիքի մէջ ապրող մեր հայրենակիցներու բարօրութեան:

Ան անդրադարձաւ նաեւ Լիբանանի մէջ տիրող իրավիճակին ու հաստատեց, որ Լիբանանի մէջ հայ համայնքը կը մնայ աշխարհասփիւռ հայութեան կարեւորագոյն օղակներէն մէկը, անիկա քաղաքական միաւոր է երկրին սահմանադրութեամբ ու քաղաքական դրուածքով: Բագրատունի նաեւ ատեցուց, որ այսօր Լիբանանի մէջ կը տիրէ շատ ծանր իրավիճակ, ու որոշ չափանիշներով նոյնիսկ աւելի վատթար, քան քաղաքացիական պատերազմի օրերուն:

Յակոբ Բագրատունիին հարց տուաւ, թէ ի՞նչ պետք է ընել, ապա նշեց, որ պատմութեան ընթացքին հաւաքականօրէն կամուրիս հայրենադարձութիւնը երբեք չէ յաջողած, իսկ Հայաստանի մերօրեայ իշխանութիւնները ո՛չ մէկ ձեւով պատրաստ են պետական մակարդակով հայրենադարձութիւն կազմակերպելու՝ այդ քայլին պահանջած ընկերային, տնտեսական, մշակութային եւ այլ պահանջներով:

«Հետեւեալը, որոշած ենք մնալ ու պայքարիլ: Իսկ այդ կը նշանակէ՝ ամէն ճիգ թափել, որ Լիբանանի մեր համայնքի Ներկայ տագնապը մեր կարելիութեան սահմաններուն մէջ թեթեւցնենք», յայտնեց Յակոբ Բագրատունի՝ շեշտելով, որ Լիբանանի հայ համայնքի օժանդակութեան կոչին դրական ու գործնական քայլերով արձագանգած են բոլորը, սկսած Հայաստանի ու Արցախի ՅՅԴ կառույցներէն, մինչեւ կաթողիկոսութիւններ եւ հայկական կազմակերպութիւններ, միութիւններ:

Հանդիպումի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին մեծ թիւով հայրենակիցներ իրենց կապի



տուեալները փոխանցեցին Հայրենադարձներու խորհրդատուութեան գրասենեակի անձնակազմին՝ շարունակական կապի պահպանման համար:

ԾԱՆՈՒ ԶԱՐԿԱԲԱՄԻՆ

Անթիլիաս, Սիմիթեան շէնքեր, մեծ բաժին՝ 200 քառ. մետր, 8-րդ յարկ: Դիմել հեռ. 71-007940 թիւին:

ԱՅՏԻԼ AFHIL
**HEALTH CLUBS
BACK TO GYM**

**Antelias - Aghpalian Center, 04 712342
Bourj Hammoud - Arin Center, 01 255023**

www.afhil.com

CHAT & PLAY

INTERNET SERVICE PROVIDER
SPECIAL OFFER FOR NEW SUBSCRIBERS
PAY 1 MONTH, GET 2 MONTHS FOR FREE
ALSO FREE CABLE INSTALLATION

for more information please contact
71-354523, 01-247365

RECRUITING

We are recruiting new positions in secretary
& customer care services. If interested kindly send
your cv to: chat.and.play.isp@gmail.com